

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

DEGHEGADOU

ديجيجادو

Հաստատվելու էին Գանձերը Լ.Գ.Ը.Մ.Ի

نشرة جمعية القادسية للتحرير والتنمية العامة



Հայոց 90
Մեծ Եղեռն 1915 2005

Ծանաչում Դատապարտում Կանխար Ելում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՍԲԱԳԻՐ
Արաքսի Տեղաբնակ

ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ
ՁԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՇԱՀԷ ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ

ՀԱՍՎԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՇԱՐՈՒԿԾՔ
ԱՆԻ ՊՕՐՈՍԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing House

Թի 35 Նոր Շրջան
Ապրիլ 2005

Եղեռնի 90-ամեակին Առիթով Վեհափառ Հայրապետին Յղած Սրբատառ Կոնդակը Հայ ժողովուրդին 1

Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակի Ո եկոչումը Երեւանի մէջ 3

Հատուածներ ՀՀ-ի Արտաքին Գործոց Նախարար Վարդան Օսկանեանի Եզրափակիչ Ելոյթէն 4

Արաբների Դիրքորոշումը 1915 Թ. Հայոց Ցեղասպանութեան Հանդէպ 6
Նիքոլայ Յովհաննիսեան

Ե իպտոսի Մասնակցութիւնը Հայոց Ցեղասպանութեան 90-ամեակի Միջոցառումներուն Երեւան 6

Ե իպտահայութիւնը Կը Ո եկոչէ Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակը 11

Աղեքսանդրիոյ Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Գրիգոր Օ ռոսինոս Սրբ. Արք. Գուսանի Խօսքը 13

Ե իպտոսի Մօտ ՀՀ Դեսպան Տոքթ. Ռուբէն Կարապետեանի Խօսքը 14

Հեղինակային Ինքնատիպ Ներկայացում «Նորա Արմանիի Հետ Բազմոցին վրայ» 16
Արաքսի Տեղաբնակ

ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովը 17

Հաշուեկշիռ Սաթենիկ Չաղըր Ֆոնտի 2004 18

Ե իպտոս ու Փարաւոններ Սօսի Յակոբեան 20

Ծանօթանանք Մելոնեան Բարերարներու Ընտանիքին 22
Գեորգ Գազանճեան

Մահ եւ Յուղարկաւորութիւն Ողբացեալ Յարութիւն (Արթօ) Վահէ Արթինեանի 24
Նազարէթ Գարթալեան

Ընդունելութիւն Ե իպտոսի մէջ ՀՀ Դեսպանութենէն ներս 25

Նոր Հրատարակութիւններ 26

Մեր Գաղութէն Ներս 27

Անդամական



ԵՂԵՌՆԻ 90-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՎԵՐԱՓԱՌ ԸԱՅՐԱՊԵՏԻՆ ՅՐԱԾ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿՐ ԸԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՒՍՈՒՐԻ ԷՋՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳՎԻՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾԻՆ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆԻ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐՊԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԿԱՊԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷՒՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱՆ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱՆ ԺՈՂՈՎՐԻՒՅՆ ՀԱՅՈՑ

«Չի ինձ կեանք Քրիստոս է» (Փիլ. Ա 21):

Միրելի բարեպաշտ ժողովուրդ

Հայոց Հաւատի վեմ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որ ունենք պարզեւ մեզ երկնային ամենաուստ չնորհով եւ օրհնութեամբ, գոհութեան աղօթք ու փառաբանութիւն ենք մատուցում Քարերար Աստուծոն այսօր, երբ 90-ամեայ յիշատակութեան առջեւ Հայոց Մեծ Եղեռնի, ի Հայաստան – ի Սփիւռս վերածնունդ ժողովրդով Համարձակաձայն կարող ենք կրկնել առաքելի խօսքը. «Չի ինձ կեանք Քրիստոս է»:

Արդարեւ, Քեզ ապաւինողը ամօթով ջննաց, Տէր, քանզի Դու եւ Յարուցեալ, եւ Քո Խօսքը՝ կենդանի ու կենդանարար ու յափառնական: Քեզ գիտենք իբրեւ ճշմարտութիւն, սեր եւ ողորմութիւն՝ Արարիչ ու Ամենաինամ, Ողորմած ու Փրկագործ: Քեզ գիտենք իբրեւ Ամբիջ ու Առաջնորդող պաշտպան զօրութիւն: Մեր Հայրերից այսպէս ուսանեցինք՝ փառաւորելով Քեզ՝ Միածին Որդուդ, Հօրը եւ Սուրբ Հոգուն:

Քրիստոսի Հետ յարութեան յոյսով մահուան դեմ կեանքի յաղթութեան Հաւատով ապրեց ու ստեղծեց մեր ժողովուրդը: Դարերի մէջ բազում աւերներ ու Հողմեր տեսաւ, բազմիցս գերեզման իջաւ, բայց Քրիստոսին յուսացեալ՝ Հաւատաց իր Հոգու լցին, իր փրկութեանն ու վերածննդին: Միշտ Հաւատաց եւ իր պատմութեամբ ու իր թողած ժառանգութեամբ վկայեց, որ յարուցեալ է Քրիստոս, եւ յարուցեալ է Քրիստոսին Հաւատացողը: Այս Հաւատով վերապրեցինք մեր պատմութեան ամենամեծ ողբերգութիւնը՝ մեր ժողովրդի ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում:

Առաջին Համաշխարհային պատերազմի թուճ ու բռնի մէջ երիտթուրքական իշխանութիւնները ժամանակը պատեհ նկատեցին՝ աւարտին Հասցնելու Հայութեան բնաջնջման թուրքական պետութեան որդեգրած քաղաքականութիւնը եւ ընդմիջտ լուծելու Հայկական Հարցը: Արեւմտեան Հայաստանում մեր Հայրենիքի մեծագոյն Հատուածի վրայ եւ կայսրութեան Հայաշատ այլ բնակավայրերում իրականացուեցին անզէն Հայ բնակչութեան կազմակերպուած ջարդեր: Մեր ժողովուրդը մահուան էր դատապարտուել միայն Հայ եւ քրիստոնէայ լինելու Համար, քանզի Հայ մնալ ու քրիստոնէայ, նշանակում էր շարունակել լինել բնիկ ու սոսնձիկ ժողովուրդը Հայաստան երկրի:

1915 թուականին աւերն էր թագաւորում, սարսափն ու մահը՝ Հայոց բնակավայրերում: Փրուում էր տունը Հայի գլխին, այրուում էր Հողը իր մշակի ոտքի տակ, ակօսը գերեզման էր դառնում, եկեղեցին՝ անբարբառ յուշարձան: Եփրատի ափերից մինչեւ Արաքսի Հովիտներ, Սեւ ծովից մինչեւ Միջերկրական՝ ձորերը լցուեցին Հայ մարդկանց դիակներով, գետերը՝ արիւնով: Թաղանուած ու սանջաւար անզէն ժողովուրդը՝ կին, մանուկ ու ծեր քուռեցին անջուր անապատ, եւ նրանց վերջին աղօթքի ունկնդիրը եղաւ սօթակեղ քամին: Անուր ջարդերին զոհ գնաց մէկ ու կէս միլիոն Հայութիւն, որը Հողագործ էր, արճեսաւոր, կառուցող շինարար, վաճառական, բժիշկ ու գիտնական:

20-րդ լուսաւորեալ դարը եղեռնով սկսուեց մեր ժողովրդի Համար, որ նոր ժամանակներում յոյս ունէր գտնել անձի ապահովութիւն, մարդկային իրաւունքի պաշտպանութիւն եւ խաղաղ կեանք: Այս էր Հայկական Հարցի բովանդակութիւնը: ՍաՀմանագրական իրաւունքներից խօսող երիտթուրքական իշխանութիւնները ամեն բան Հաշուարկել էին՝ չկայ ժողովուրդ, չկայ Հայկական Հարց, չկայ ժառանգորդ, չկայ՝ պահանջատեր: Չարահնար ծրագրի Հեղինակները վատաՀ էին, որ իսպառ պիտի բնաջնջուի Հայութիւնը, երկրէ երկիր ցրուելով՝ անյիշատակ ու անՀետ պիտի վերանայ



պատմութեան ասպարեզից: Ամէն բան Հաշուարկել էին, բայց ոչ Աստուծոյ նախաինամութիւնը եւ Աստծուն յուսացեալ ժողովրդի ասրելը եւ արարելը կամքն ու զօրութիւնը:

Նոյն ջարդարարների արշաանքներին դիմակայելով ընդդէմ մահու խիզախումով Հերոսացած փրկուեց Արեւելեան Հայաստանի փոքրիկ Հողակտորը, որի վրայ Հաստատուեց Հայոց նոր պետականութիւնը: Մեր ազատ երկրի դրօշի ներքոյ Ծիծեռնակաբերդի բարձունքում Արարատահայեայ վեր է յանել Մեծ Եղեռնի յուշակոթողը, որտեղ լուսեղէն զօրաց գնդերով Հոգիներն են երկրի վրայ մեր Հողը սրբացրած եւ երկնքում Աստուած փառաբանող մեր նաՀատակների եւ որտեղ ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի միասին է ազգս Հայոց: Յաւերժատես այս բարձունքին մեր ցան ու արդար ցատակը զօրութիւն դարձաւ եւ ծունդ առաւ Արցախեան յողմանակող ոգին:

Փառք քեզ, ժողովուրդ սիրելի, որ չերկնչեցիր մահուան քրքիջից: Խաչք ուսած անցար Գողգոթայի ճանապարհներով եւ յարութիւն առար յողմանակած:

Փառք քեզ, ժողովուրդ սիրելի, որ վերքը սրտիդ բնաւեր սունդ վերասին կառուցեցիր Հայրենիքիցդ Հեռու եւ մօտիկ բազում երկրներում եւ շարունակեցիր Հայ մնալ ու քրիստոնեայ: Արարող Հանճարով շարունակեցիր Հայ ստեղծել կառուցել, գիտութեան ու մշակոյթի բարձունքների Համնել եւ այսպէս ճանաչուած ասրել:

Երիցս փառք քեզ, ժողովուրդ սիրեցեալ, «Չի ինձ կեանք Քրիստոս է» Հաւատով քայլեցիր դէպի քո կեանքի նոր այգաբայրը, եւ յուսացիր իրաւունքի ու արդարութեան դարի նոր առաւօտը ու այս ճանապարհին մնացիր կանգուն ու արի:

Չէք մոռացել ու չէք կարող մոռանալ Հայոց Յեղասպանութիւնը, մեր պատմութեան այս մեծագոյն ողբերգութիւնը: Չէք մոռացել ու չէք կարող մոռանալ աւերակուած ինկաբոյր երկիրը մեր, Հայրենական սրբութիւններն ու բազմադարեայ յիշատակները: Մեզ Հեա են մեր բիւրաւոր նաՀատակները՝ յայտնի ու անյայտ անուններով: Նրանց յիշատակի առջեւ միասին ենք միշտ: Մեզ Հեա են ի պաշտպանութիւն մեր ժողովրդի բողբոջի ազնիւ ձայն բարձրացրած մեծ մարդասէրները, որոնց շուրթերից մարդկութեան խիղճն էր խօսում Եղեռնի մահապիւռ օրերին: Մեզ Հեա են այն ժողովուրդները, ովքեր մարդասիրաբար ապաստան տուեցին ջարդերից փրկուած բեկորներին Հայութեան:

Անցել են ժամանակները, երբ մեր Հայրերը չէին կարող ոգեկոչել յիշատակը մարտիրոսացած Հայորդիների, երբ միայնակ էին ազգային ողբերգութեան ու վշտի մէջ: Ասոր շատ ազգեր ու պետութիւններ ճանաչում են մեր ժողովրդի Հանդէպ գործուած ոճիրը՝ իբրեւ յանցանք մարդկութեան ու մարդկայնութեան դէմ: 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը պիտի ճանաչուի ու դատապարտուի ողջ աշխարհի ու նաեւ Թուրքիայի կողմից, այն Համոզումով որ բռնութիւններն ու սպանութիւնները չեն կարող առաջնորդել մարդկութեան ճանապարհը: Խաղաղութիւնն ու ազատ կեանքը, եղբայրութիւնը մարդկանց ու ազգերի միջեւ, արդարեւ, երազն է բոլոր ժողովուրդների:

Մեծ Եղեռնի 90-ամեայ տարեկիցի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում աշխարհասփիւռ սիրեցեալ մեր ժողովրդին: Չեռք-ձեռքի ու սիրտ-սրտի միասին ենք յիշատակի առջեւ մեր անմեղ զոհերի, ովքեր իրենց աչքերը փակեցին մեր ժողովրդի վերածնութեան, մեր Հայրենիքի ազատութեան տեսիլքով: Հաւատարիմ լինենք նրանց տեսիլքին: Որտեղ էլ ապրենք, փոխանցենք մեր զաւակներին Արարատի պատկերը նուիրական, Լուսաւորչի Կանթեղն անմար եւ Հայրենի մեր Հողն ու երկինքը միաւորող Սուրբ Էջմիածնի խորհուրդը յաւերժական: Որտեղ էլ ապրենք, Համակ նուիրումով տեր կանգնենք մեր ազգային իղձերին ու ձգտումներին: Պաշտպանենք Արցախի ազատութեան իրաւունքի, Հայոց Յեղասպանութեան ճանաչման մեր արդար դատը: Միասնական ուժերով կառուցենք նոր կեանքը Հայաստանի ու Արցախի եւ Հայրենի Հողից առած աւիւնով զօրացեալ ու ծաղկուն պաՀպանենք Հայ Սփիւռքը: Ապրենք «Չի ինձ կեանք Քրիստոս է» վստահութեամբ եւ Հաւատով որ Աստուած Համախմբելու է մեզ Արարատի փէշերին: Տէրը կամեցաւ ազգիս յարութիւնը, որպէսզի յարատեւի Աւետարանի ըյտով ու կեանքի սիրով աշխարհին բացուած Հայի Հոգին, եւ Հայրեն աղօթքը շարունակի երկինք բարձրանալ Հայցելով աշխարհին խաղաղութիւն եւ ի մարդիկ Հաճութիւն: Հաւատանք ի Քրիստոս սիրով զօրացեալ առաքինապործ Հոգու շնորհներին մեր կեանքում՝ եւ Հայոց միացեալ ու պայծառ գալիքին:

«Հաստատուն կացեք, գտելի կալիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, եւ զբեցեալ զգրահան արդարութեան» (Եփես. Զ 14):

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
 Տուա Կոնդակա ի 3-՜ս Փետրուարի
 յամի Տեառն 2005 – ի թուին Հայոց ՌՆԾԻ
 ի տօնի Սրբոյ Վարդանանց զօրավարացն՝
 Հազար երեսուն – վեց վկայիցն
 ի Մայրավանա Սրբոյ Էջմիածնի
 ընդ Համարաւ 285



ՐԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 90-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակի ուժեղացման առիթով Երեւանի մէջ տեղի ունեցաւ ցեղասպանութեան նուիրուած միջազային համաժողով մը 20 եւ 21 Ապրիլ 2005-ին:

Իսկ, 24 Ապրիլին տեղի ունեցաւ աւանդական համաժողովրդական երթը դէպի Ծիծեռնակաբերդի Եղեռնի Յուշարձանը: Նոյն օրը, երեկոյեան ժ.ը 5.00-ին Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ էկումենիկ աղօթք նուիրուած Եղեռնի զոհերու յիշատակին:

Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութիւնը այս առիթով կազմակերպած էր

Ապրիլ 18-ի երեկոյեան ժ.ը 7.00-ին

Ցեղասպանութիւններու նուիրուած ֆիլմերու միջազային ներկայացում, համատեղ հովանաւորութեամբ ՄԱԿ-ի,

Մոսկուա Թատերասրահին մէջ

Ապրիլի 20-ին երեկոյեան ժ.ը 6.30-ին

Արմին Վէկնէրի նկարներու ցուցահանդէս,

Հայերը Անատոլիայի մէջ 1915-1916.

Արտաքին Գործոց Նախարարութեան 3-րդ յարկին մէջ

Դարձեալ Ապրիլի 20-ին երեկոյեան ժ.ը 7.30-ին

Ուժեղացման Համեր, կատարմամբ Հայաստանի Պետական Ֆիլհարմոնիկ Նուա-ախումբի եւ Հուն-արիոյ Ազ-ային Ռատիոյի Եր-չախումբին,

«Արամ Խաչատրեան» համեր-ասրահին մէջ

Ապրիլ 22-ի կ.վ. ժամը 2.00-ին

Ներկայացում Մարդկային Իրաւանց եւ Ցեղասպանութեան վերաբերեալ յրականութեան հաւաքածոյի,

Արտաքին Գործոց Նախարարութեան Դաւիթեան Գրադարանին մէջ

Ապրիլ 24-ի կ.վ. ժ.ը 2.00-ին

Ընդունելութիւն ի պատիւ հիւրերու,

Արուեստի Ազ-ային Պատկերասրահին մէջ

Ապրիլ 20-21-ին կայացած միջազային համաժողովին, որ ունարուեցաւ Երեւանի Արմենիա Պանդոկին Մեծ Տի-րան Սրահին մէջ, ներկայ էր աշխարհի տարբեր երկիրներէն ժամանած բազմազ-ի հասարակութիւն մը:

Երկու օր տեւող խորհրդաժողովին ընթացքին ողջոյնի ուղերձներով կամ ուսումնասիրական ելոյթներով խօսք առին 28 հո-ի: Իսկ, ներկայացուած ուսումնասիրութիւններուն մասին քննարկումներով հանդէս եկան 22 հո-ի, անկախաբար համաժողովին ընթացքին հարցադրումներ կատարող ներկաներու ելոյթներէն:

Համաժողովին համար, որդէ-րուած «Ծայրա-ոյն յանցանք, ծայրա-ոյն մարտահրաւէր» բնաբանը, կը խտացնէր համաժողովին նպատակը, որուն ձ-տումն էր մէկ ան-ամ եւս փորձել հասկնալ ծայրա-ոյն յանցանքի՝ ցեղասպանութեան բնոյթը, ուսումնասիրել ցեղասպանութեան ակունքները, տնել բանաձեւեր զայն կանխելու համար: Իսկ ծայրա-ոյն մարտահրաւէրը՝ անցեալը յաղթահարելու ուղիներու որոնումն է:

Հայոց ցեղասպանութեան 90-րդ տարելիցի միջոցառումներու կազմակերպման Պետական Յանձնաժողովին հովանաւորութեամբ կայացող այս միջազային համաժողովը, կազմակերպած էր ՀՀ-ի արտաքին-ործերու նախարարութիւնը:

Համաժողովի աշխատանքներուն մտայղացման եւ կազմակերպութեան համար օժանդակութիւն ցուցաբերած էր նաեւ ժամանակակից Հայկական Ուսումնասիրութիւններու եւ Վաւերա-րութեան Զօրեան Հիմնարկը:

Հաշուի առնելով համաժողովին ընթացքին ելոյթ ունեցողներուն բարձր հան-ամանքները, ներկայացուած միւթերուն մասնա-խտական բարձր մակարդակը, հայերու կողքին տարբեր ազ-ութիւններու պատկանող մասնակիցներու՝ ընդ որում թուրքերու եւ հրեաներու ներկայութիւնը, պատմական կշիռ կու տան այս համաժողովին:

Համաժողովին պատմական կշիռ կը բերէ մանաւանդ ՀՀ-ի արտաքին-ործերու նախարար Վարդան Օսկանեանի ունեցած հոյակապ եզրափակիչ ելոյթը, որ տերազանց կարողութեամբ կը ներկայացնէր Ցեղասպանութեան հարցին վերաբերեալ հայկական պետական թէ ժողովրդական դիրքորոշումը, պատմական բոլոր իրականութիւններու թուումով, առանց որեւէ դիւանա-խտական սայթաքումի, հիմ ունենալով կու տրամաբանութիւնը, յստակ եւ դիպուկ բնորոշումները եւ անկեղծ, արդար եւ հաշտարար մօտեցումը:

Զարմանալի չէ հետեւաբար, թէ Եղեռնի 90-ամեակին առթիւ կազմակերպուած այս համաժողովը, դեռ երկարատեւ իր զօրաւոր եւ հեռահաս արձա-ան-ները հնչեցնէ հայկական եւ միջազային իրականութեան մէջ, եւ արմատէն ցնցէ թրքական պաշտօնական պատմա-րութիւնը, ինչ կը վերաբերի հայկական ցեղասպանութեան մասին անոր պարտադրած տեսակէտներուն:

«Տ.»



ՀԱՏՈՒԱՅՆ ԸՎ Ի ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵԼՈՅԹԵՆ

ԱՐՏԱԱՆՈՒԱԾ ԵՂԵՈՆԻ 90-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՋ 24 ԱՊՐԻԼ 2005

(Թար Վանութիւն)

Հայաստանը եւ Թուրքիան հարկ է որ դիմագրաւեն իրենց պատմութիւնը առանձին եւ միասնաբար.

Հայաստան կը հաւատայ թէ Թուրքիա մէկդի պէտք է դնէ պատճառաբանութիւնները եւ բնականոն յարաբերութեան մէջ մտնէ դրացիի մը հետ, որ ոչ պիտի հեռանայ եւ ոչ ալ պիտի մոռնայ իր պատմութիւնը:

* * *

Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան երկու երրորդը ջարդուած կամ տեղահանուած է 1915-ի եւ 1918-ի միջեւ:

Այսօրուան Թուրքիոյ Հանրապետութիւնը պէտք է կարողութիւնը ունենայ դատապարտելու այս քայլերը այնպէս ինչպէս որ գիտցուած են:

Փաստերը անթիւ են, յստակ եւ անխուսափելի: Հայերը Օսմանեան կայսրութեան մեծագոյն փոքրամասնութիւններէն էին:

Ո՞ր գացին անոնք:

Կարելի՞ քան է, որ մեր մեծ մայրերը եւ մեծ հայրերը ստեղծեցին եւ պատմութիւններ շինեցին:

Ո՞ր են յետնորդները այն հայերուն, որոնք կերտեցին հարիւրաւոր եկեղեցիները եւ վանքերը, որոնց աւերակները դեռ կանգուն են այսօր Թուրքիոյ մէջ:

Արդեօք ԱՄՆ-ի դեսպան Հենրի ՄորկընԹաուի տեղեկատուութիւնը այն վայրագութիւններուն մասին որոնց վկան եղած է սո՞ւտ են:

Ինչո՞ւ համար զինուորական ատեան մը կազմուած էր Ա. Համաշխարհային պատերազմի աւարտին եւ ինչո՞ւ Օսմանցի Թուրք ղեկավարները մեղաւոր հռչակուած էին հայերու զանգուածային սպանութեան համար:

Ինչպէ՞ս կարելի է բացատրել գոյութիւնը հազար հազարաւոր էջերու, երկոտասնեակ մը երկիրնեւ պաշտօնական արխիւներուն մէջ, որոնք կը փաստագրեն Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան անէացման ծրագիրները:

Եթէ ցեղասպանութիւն չէր այլ պարզապէս «պատերազմի ժամանակուայ տեղահանութիւններ» այսպէս կոչուած, յեղափոխական հայ բնակչութեան, որ կը գտնուէր Թուրքիոյ արեւելքը Ռուսական կայսրութեան սահմանին վրայ, ինչպէս երբեմն կը յայտարարեն թուրք չքմեղողներ, ինչո՞ւ ուրեմն արեւմտեան քաղաքներու մէջ գտնուող հայերու տուները կողոպտուեցան եւ այրուեցան:

Ինչո՞ւ համար ծովեզերեայ քաղաքներ եղող Իզմիրի եւ Պոլսոյ հայերը տեղահանուեցան:

Մարդոցմով լեցուն նաւեր ծովուն մէջ ընկղմուեցան, ա՞յս է տեղահանութիւն կոչուածը: Կարելի՞ քան է որ բազմաթիւ մտաւորականներու մէկ զիշերուայ մէջ ձերբակալութիւնը եւ սպանութիւնը կանխամտածուած չլլայ:

Երբ կառավարութիւն մը կը ծրագրէ իր սեփական բնակչութիւնը անէացնել, քաղաքական հարց մը լուծելու համար, ատիկա ցեղասպանութիւն կ'ըլլայ:

20-րդ դարու սկիզբը, Օսմանեան կայսրութիւնը կը կծկուէր եւ իր կայսրութեան շրջագիծին վրայ գտնուող հպատակներուն վրայ իր իշխանութիւնը կը կորսնցնէր վախճանով որ Անատոլիայի մէջ եւս, հայ փոքրամասնութիւնը պիտի ձգտի աւելի լայն իրաւունքներ ձեռք բերելու եւ հրաւիրելու օտար ուժերը ճնշում բանեցնելու, Օսմանեան ղեկավարութիւնը Ա. Համաշխարհային պատերազմը օգտագործեց, փորձելով ոչնչացնել հայութիւնը, սկսելով ղեկավարութենէն, որուն յաջորդեցին այր մարդոց եւ վերջապէս կիներու, մանուկներու եւ երէցներու տեղահանութիւնը:

Այս բոլորը յստակօրէն կը պատշաճին ցեղասպանութիւն սահմանումին:

* * *

Թուրքիա պէտք է բաժնէ պատմութիւնը քաղաքականութենէն:

Այն պատրուակները թէ ի՞նչ կրնայ հետեւիլ ցեղասպանութեան ճանաչումին, միայն պատրուակ են:

Ինչո՞ւ համար անոնք կը զարմանան որ Արարատը մեր պետական խորհրդրանշանին վրայ կը գտնուի:

Հայերը այս հողերուն վրայ ապրած են հազարաւոր տարիներ եւ Հայաստանի սահմանները այդ միջոցին շատ անգամներ փոխուած են: Ասիկա պատմական իրողութիւն է:

Հայկական թագաւորութիւնը կը տարածուէր ծովէ ծով: Այս ալ պատմական իրողութիւն մըն է, վերջին



փոփոխությունը տեղի ունեցաւ 20-րդ դարու սկիզբը: Այդ ալ պատմական իրողութիւն է:

Սեւրի դաշնագրին տրամադրութիւններով, Հայաստանի հողատարածքը այսօրուայ հողատարածքին տասը անգամն էր: Այդ եւս պատմական իրողութիւն մըն է, ինչպէս պատմական իրողութիւն մըն է որ Թուրքիան ժխտեց այն դաշնագիրը որ ստորագրուած էր իր իսկ սեփական կառավարութեան կողմէ եւ ուժի դիմելով ստեղծեց իրողական de facto նոր կացութիւն մը, որուն հետեւեցաւ նոր համաձայնագրի մը ստորագրութիւնը, առանց նոյն ստորագողներուն: Այս նոր համաձայնագիրը առաւել կամ նուազ չափով գծեց այսօրուան սահմանները: Այդ եւս պատմական իրողութիւն է:

Սակայն, քաղաքական իրողութիւն մըն է որ այսօր Թուրքիա եւ Հայաստան գոյութիւն ունին միջազգային համայնքին մէջ, իրենց ներկայ սահմաններով:

Քաղաքական իրողութիւն մըն է, որ մենք դրացիներ ենք եւ իրարու հետ կողք կողքի պիտի ապրինք:

Քաղաքական իրողութիւն մըն է, որ Հայաստանը Թուրքիոյ ապահովութեան համար վտանգ մը չի ներկայացներ:

Եւ վերջապէս, քաղաքական իրողութիւն մըն է որ **այսօրուան** Հայաստանն է, որ կ'ուզէ դիւանագիտական յարաբերութիւններ ունենալ **այսօրուան** Թուրքիոյ հետ:

Այս պատճառներով, Յեղասպանութեան ճանաչումէն անդին, ոչինչ չէ եղած եւ չկայ Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգին վրայ:

* * *

Երէկ հարցազրոյց մը ունէի թրքական հեռատեսիլէն խումբի մը հետ:

Ուղղակի զարմացայ այդ խումբին ունեցած սխալ տեղեկութիւններուն տարողութեան համար:

Անոնք զարմացած էին, որ հայ-թրքական սահմանը բաց է հայկական կողմէն եւ Թուրքիան է որ գայն փակ կը պահէ:

Անոնք զարմացած էին որ Հայաստան նախապայմաններ չունի Թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու համար:

Անոնք չափազանց զարմացած էին թէ նոյնիսկ ցեղասպանութեան ճանաչումը նախապայման չէ դիւանագիտական յարաբերութիւններու համար:

Անոնք զարմացած էին նաեւ թէ Կարսի դաշնագիրը չէր ժխտուած կամ բեկանուած Հայաստանի կառավարութեան կողմէ:

Այժմ ես զարմացած եմ, որ թրքական պաշտօնական բրոքականտը տիրականօրէն մշուշած է շատերու տեսարաշարը:

Գոյութիւն ունի նաեւ ուրիշ սխալ հասկացողութիւն մը:

Մարդիկ սխալմամբ կ'ենթադրեն թէ մենք հակառակ ենք Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան:

Անոնք ասոր մէջ եւս կը սխալին:

Անշուշտ որ պիտի ուզէինք Թուրքիան անդամ տեսնել Եւրոմիութեան:

Պիտի ուզէինք տեսնել Թուրքիա մը, որ նմանի Պելճիքայի, Իտալիոյ եւ ուրիշներու:

Պիտի ուզէինք Թուրքիան միացած տեսնել Եւրոմիութեան, որպէսզի մեր սահմանները բաց ըլլան եւ մեր հայրենակցիները եւ թուրք գիտնականները աւելի ազատօրէն խօսին Յեղասպանութեան մասին:

Պիտի ուզէինք Թուրքիան անդամ տեսնել, որպէսզի մեր եկեղեցիները եւ սեփականութիւնները պաշտպանուին եւ վերանորոգուին:

Հայաստան կը հաւատայ, թէ ճիշդ այս պահուս, երբ Թուրքիա վերանայելու վրայ է մարդկային եւ քաղաքացիական իրաւունքները, արտայայտութեան եւ կրօնքի ազատութիւնը, պէտք է քաջալերուի, համոզուի եւ ընդունի իր անցեալը: Նման քաջալերանքը եւ համոզուելու աշխատանքը հարկ է որ գան դուրսէն եւ առաւել կարեւորութեամբ թրքական հասարակութեան ներսէն, ինչպէս որ Հրանդ Տիւրք երէկ նշեց:

Թուրք գրողներ եւ քաղաքական մարդիկ սկսած են ներքնութեան եւ ուսումնասիրութեան դժուար գործընթացին:

Ոմանք այդպէս կ'ընեն հրապարակաւ եւ մեծ թափանցիկութեամբ:

Մենք կրնանք միայն ենթադրել որ Եւրոպան պիտի ակնկալէ Թուրքիայէ մը, որ այդքան լրջօրէն հետամուտ է Եւրոմիութեան անդամակցութեան, եւ անշուշտ կարող է Եւրոմիութեան անդամակցութեան պահանջած բարդ եւ մանուածապատ ուղիներէն անցնիլ, որ պէտք է ընդունի իր անցեալը:

Այս ծիրէն ներս, կենսական է որ միջազգային համայնքը իր օրէնքներէն չչեղի, աչք չգոցէ, իր չափանիշները չնուազեցնէ, այլ շարունակ ձեռք կարկառէ, ցոյց տայ իր անձնական օրինակը՝ շրջանցման իր պատմութիւնը, որպէսզի հայերը, թուրքերը եւ բոլոր եւրոպացիները, յառաջ շարժին կերտելու համար նոր պատմութիւնը:



ԱՐԱՔՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1915 Թ. ՐԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՐԱՆԴԵՊ

1915-ի Ցեղասպանության 90-ամեակի ոտնկոշուճը մեզ դարձեալ պարտաւորութեան առաջ կը դնէ անդրադառնալու հայ ժողովուրդին վերապրումին ու ոռյատեւման պայքարին մէջ արաբ ազնիւ ժողովուրդին ունեցած դերակատարութեան մասին արտայայտուելու եւ մեր երախտադրութիւնը յայտնելու անոր:

Այդ դերակատարութեան մասին է, որ ի միջի այլոց կը որէ Րայաստանի Գիտութիւններու Ազոային Ակադեմիայի Արեւելադրութեան Ինստիտուտի տնօրէն՝ Նիքոլայ Յովհաննիսեան, իր «Արաբական Երկիրներու Պատմութիւն» ոործին Բ. հատորին մէջ:

Վարտատպենք Բ. հատորին եօթներորդ ոլուխին երրորդ բաժնին առաջին մասը, նկատի ունենալով որ բոլոր հայերը, մանաւանդ անոնք, որոնք քաղաքացիներն են արաբական որեւէ պետութեան, պարտաւոր պետք է զոան իրազեկ ըլլալու այն դիրքորոշումին, զոր արաբները ցուցաբերեցին մեզի հանդէպ:

«Տ.»

1. Արաբների ասպնջականութիւնը: «Րայերի պատմութեան մէջ արաբների անուը կը գրուի ոսկի տառերով»

XX դարի առաջին՝ հայերի 1915 թ. ցեղասպանութիւնը, ցնցեց արաբներին, ինչպէս նաեւ Օսմանեան կայսրութեան միւս ժողովուրդներին:

Արաբները թերեւս միակ ժողովուրդն էին, որ ազգովին 1915 թ. Րայոց Ցեղասպանութեան ակաւատեաները եղան, երբ բռնի տեղահանուած հայերի քարաւաններն անցնում էին նրանց տարածքներով, նրանց անապատներով, գիւղերի, անաւների

ու քաղաքների միջով: Րայոց գողգոթայի վկաները հանդիսացան Տեր Էլ Չօրի, Ռաս Ուլ Այնի, Րալեպի, Մեսքենէի, Մուսուլի, Պաքուպայի, Պաղտատի, Նահր ալ Ումարի եւ Շաթ ալ Արաբի փերին փոռուած շատ բնակավայրերի արաբ բնակիչներ: Րայերի համար դրանք ոչ թէ տոսկ արաբական աշխարհագրական անուններ են, այլ նրանց պատմութեան ամենաողբերգական հանգրուանները խորհրդանշող ուղենիշներ:

Րայոց Ցեղասպանութիւնը՝ մեթոդաւորական առումով, երիտթուրքերի կողմից ծրագրուած էր իրականցնել երկաստիճան մակարդակով: Առա-

շարունակութիւնը յաջորդ էջ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՐԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՐԵՒԱՆ

Եգիպոսի մէջ ՐՐ Դեսպանութեան եւ եգիպտահայ համայնքին միացեալ ծրագրուած գործունեութեան որպէս արդիւնք, առաջին անգամ ըլլալով եգիպտացի ներկայացուցիչներ՝ «Էլ-Ահրամ» Ռազմավարական Ուսումնասիրութիւններու Կեդրոնի ներկայացուցիչ Զարիմ Էլ-Գատի, «Էլ-Կումիուրիա» օրաթերթի գլխաւոր խմբագրի տեղակալ եւ դիւանագիտական եւ քաղաքական բաժնի խմբագիր Մոհամմետ Իսմայիլ եւ մարդու իրաւունքներու միջազգային իրաւունքի մասնագետ, Գահիրէի Ամերիկեան համալսարանի ներկայացուցիչ Մոհամմետ Ս. Րէլալ, մասնակցեցան Երեւանի մէջ Ապրիլ 20-24 տեղի ունեցած Րայոց Ցեղասպանութեան 90-ամեակի յիշատակման միջոցառումներուն:

Սոյն միջոցառումներուն Գահիրէէն պաշտօնապէս ներկայ եղան նաեւ Գահիրէի Զաղաքական ժողովի եւ Եգիպտոսի ՐԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ՝ տիար Պերճ Թերզեան եւ «Al Ahram Weekly» շաբաթաթերթի եւ «Travel Today» ամսագրի թղթակից տիկին Եւա Տատուրեան:

Այս առնչութեամբ արդէն իսկ զանազան լրագիրներու մէջ յօդուածներ լոյս տեսած են: Իսկ Եւա Տատուրեանի Րայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի պատմութեան, տնտեսութեան եւ զբօսաշրջիկութեան մասին պատրաստած յօդուածներու շարքը լոյս կը տեսնէ յառաջիկային:

«Էլ-Ահրամ» Ռազմավարական Ուսումնասիրութիւններու Կեդրոնի ներկայացուցիչին, Րայաստան այցելութեան ընթացքին դեսպանութեան նախաձեռնութեամբ «Նորավանք» համագոր հիմնադրամի դեկավարութեան հետ ունեցած հանդիպումը, երկու կազմակերպութիւններուն միջեւ համագործակցութեան հաստատման յանգած է:



շին, հայերի հիմնական մասի սպանությունն սրանց բնօրրանում՝ Արեւմտեան Հայաստանում, երկրորդ, սրանց մնացած մասի ոչնչացում արաբական անապատներում եւ բնակավայրերում՝ բռնագաղթի ճանապարհին:

Հայերի գանգուածային սպանությունն իրագործուեց հայկական վեց մարզերում՝ Էրզրումի, Սոււազի, Խարբերդի, Բիթլիսի, Վանի եւ Տիարպեքիի վիլայաթներում, ինչպէս նաեւ Օսմանեան կայսրութեան հայաբնակ մնացած բոլոր այլ վայրերում:

Իսկ Ցեղասպանութեան երկրորդ մասը երիտթուրքական ղեկավարութիւնը յոյս ուներ իրագործել արաբական երկրներում՝ դաժան անապատային բնակլիմայական պայմանների, հայ գաղթականներին սովի եւ ծարաւի մատնելու, սրանց գոյութեան համար դժոխային պայմաններ ստեղծելու միջոցով, սակայն, ամենագլխաւորը՝ արաբների օգնութեամբ: Սրանք հաւատացած էին, որ հայ ընտանիքներին, ծերունիներին, կանանց, երեխաներին եւ հիւանդներին Սիրիա եւ Իրաք քարտէլով, ի դէմս արաբների սրանք կը գտնեն իրենց արիւնոտ գործի շարունակողների: Երիտթուրքական ղեկավարութիւնն իր յոյսը դրել էր արաբների մուսուլման լինելու եւ իրենց կողմից քրիստոնեաների դէմ յայտարարուած սրբազան պատերազմի՝ ճիհատի վրայ, հանգամանքներ, որոնք, ըստ սրանց տրամաբանութեան, արաբներին ինքնաբերաբար պետք է դարձնէին քրիստոնեայ հայերի, եթէ ոչ ռիսերիմ, ապա առնուազն անհաշտ թշնամի:

Բայց երբ հայ գաղթականների յոգնած, սոված ու տանջահար քարաւանները յայտնուեցին Սիրիայի, ապա Իրաքի եւ արաբական միւս երկրների տարածքներում, կատարուեց անսպասելին: Արաբ ազգաբնակչութիւնը, որն ատում էր թուրքերին եւ արդէն նախապատրաստուում էր ապստամբել Օսմանեան ատելի լծի դէմ, օգնութեան ձեռք մեկնեց հայ տարագիրներին, սրանց առջեւ բացեց իր սիրտը եւ տան դռները, որի շնորհիւ հարիւր հազարաւոր հայ գաղթականներ փրկուեցին անխուսափելի մահուան ճիրաններից: Դա համաշխարհային պատմութեան մէջ ասպնջականութեան, ասպետական մարդասիրութեան ամենափայլուն դրսեւորումներից մէկն էր: Հայ գաղթականները, հակառակ երիտթուրքերի սպասումների, արաբական երկրներում գտան ոչ թէ թշնամական, այլ բարեկամական միջավայր: Հէնց այս հանգամանքը որոշիչ դեր խաղաց արաբական երկրներում հայերի հաստատման եւ յետագայում հայկական համայնքների ձեւաւորման համար: Իսկ դա իր հերթին հիմք հանդիսացաւ մերօրեայ Սփիւռքի առաջացման համար Արաբական Արեւելքում, որն այնուհետեւ իր ճիւղաւորումներն ունեցաւ աշխարհի տարբեր կողմերում:

Հայ տարագիրների նկատմամբ արաբների՝ թէ՛ բնակչութեան եւ թէ՛ պաշտօնեաների, բարեկամական դիրքորոշումը, ինչպէս նաեւ սրանց կողմից Հայոց Ցեղասպանութեան դատապարտումը, պայմանաւորուած էր նաեւ այն հանգամանքով, որ ինչ-

պէս նշել ենք, XIX դարի վերջերին եւ XX դարի սկզբներին արաբ եւ հայկական քաղաքական միտքն արդէն յանգել է այն հետեւութեան, որ հայերի եւ արաբների ազգային – քաղաքական շահերը համընկնում էին, քանի որ սրանք գտնուում էին միեւնոյն՝ Օսմանեան տիրապետութեան տակ, որի բռնակալական լծից ազատագրուելու հարցում սրանք հանդիսանում էին բնական դաշնակիցներ:

Հայ գաղթականներին օգնութիւն ցոյց տալը ոչ միայն դիւրին չէր, այլեւ շատ վտանգաւոր գործ էր, քանի որ երիտթուրքական իշխանութիւնները խստիւ արգելել էին արաբներին որեւէ օգնութիւն ցոյց տալը հայերին, սպառնալով ամենադաժան պատիժներ:

Արաբների կողմից հայ գաղթականներին նկատմամբ դրսեւորուող մարդասիրական վերաբերմունքի մասին, հարկաւ, տեղեակ էին երիտթուրքական պարագլուխները: Դրա մասին են վկայում ներքին գործերի նախարար Թալէաթի ստորեւ բերուող մի շարք նախազգուշական գաղտնի հեռագրերը Հալէպի նահանգապետին եւ այլ տեղական կառավարիչներին:

«Հալէպի նահանգապետին, 9 Սեպտեմբերի 1915 թ.:

Թուրքական հողի վրայ հայերի ապրելու եւ աշխատելու իրաւունքը կատարելապէս չեղեալ է համարում: Այս կապակցութեամբ կառավարութիւնն իր վրայ է վերցնում ամբողջ պատասխանատուութիւնը եւ հրամայում է նոյնիսկ չխնայել օրօրոցի մանուկներին: Այս հրամանի իրագործումն արդէն տուել է իր արդիւնքը մի շարք նահանգներում: Հակառակ դրան, մեզ անյայտ պատճառներով, բացառութիւններ են եղել մի շարք մարդկանց նկատմամբ՝ փոխանակ քարտավայր ուղարկելու, սրանց պահել են Հալէպում: Այս հանգամանքը կառավարութեանը կանգնեցնում է աւելի դժուարին կացութեան առջեւ: Առանց ուշադրութիւն դարձնելու սրանց առարկութիւններին, այդտեղից հեռացրէք բոլորին, ով ուզում է լինի, թէ՛ կանանց եւ թէ՛ երեխաներին, նոյնիսկ սրանց, ովքեր ի վիճակի չեն շարժուելու: Թոյլ մի տուէք, որ մարդիկ պաշտպանեն սրանց:

Ներքին գործերի նախարար՝ Թալէաթ»:

Ուղիղ մէկ շաբաթ անց՝ 1915 թ. Սեպտեմբերի 16-ին, Թալէաթը Հալէպի նահանգապետին է ուղարկում մէկ այլ հեռագիր. «Ձեզ արդէն հաղորդուել է այն մասին, որ կուսակցութեան որոշմամբ, հրահանգուած է ամբողջապէս ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին: Սրանք, ովքեր դէմ կը կանգնեն այս որոշմանը, չեն կարող մնալ կայսերական պատասխանատու պաշտօններում: Ինչքան էլ, որ դաժան լինեն ձեռնարկուած միջոցառումները, սրանց (հայերի – Ն. Հ.) գոյութեանը վերջ է տրուելու:

Ուշադրութիւն մի դարձրէք սրանց ո՛չ տարիքին, ո՛չ սեռին եւ ո՛չ էլ խղճի խայթ զգացէք: Ներքին գործերի նախարար՝ Թալէաթ»:

Եւ, վերջապէս, եւս մէկ սահմնեցուցիչ գաղտնի



հրահանգ Հալեայի նահանգապետին, որը թուագրուած է 1915 թ. Նոյեմբերի 23-ին եւ ստորագրուած էրիտթուրքական եռապետութեան անդամ եւ ներքին գործերի նախարար Թալեաթի կողմից: «Արեւելեան վիլայեթներից ձեր ձեռքն անցած հայերին ոչնչացրէք գաղտնի ձեւով: Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»:

«Տեղահանութեան մասին օրէնք»ի համաձայն, որն ընդունել էր Օսմանեան կայսրութիւնը դեռեւս 1915 թ. Մայիսի 14 (27)ին, թուրքական բանակի կորպուսների, բանակների եւ տիփիզիանների հրամանատարներին հրամայուած էր խստագոյնս գէնքի ուժով պատժել բոլոր նրանց, ովքեր որեւէ ձեւով կը հակառակուէն հայերի տեղահանման մասին օրէնքի կատարմանը, կառավարութեան հրամաններին ու միջոցառումներին: Այս օրէնքի իրագործման պատասխանատուութիւնը դրուած էր ռազմական նախարար Էնվերի վրայ: Ըստ այդ օրէնքի, թուրք հրամանատարութիւնը զգուշացրել էր տեղական իշխանութիւններին, որ նրանք պատասխանատուութիւն են կրում տոյն օրէնքի կատարման համար եւ եթէ մուսուլմանները փորձեն իրենց տներում պահել հայերին, «ապա նրանք պէտք է կախաղան հանուէն իրենց տների առջեւ, իսկ տները՝ հրդեհուէն»: Մէկ այլ հրամանով, որն անմիջապէս վերաբերում էր զինուորականներին, խստօրէն նախագզուշացուած էր, որ հայերին պաշտպանել փորձող մուսուլմանները, «եթէ զինծառայող են, կը զրկուէն զինուորական կոչումից եւ անյապաղ կը կանգնեն զինուորական դատարանի առջեւ»: Զաղաքացիական ծառայողները նման արարք թոյլ տալու դէպքում, նոյնպէս կանգնելու էին զինուորական դատարանի առջեւ:

Չնայած այս խիստ հրամաններին եւ կարգադրութիւններին, շատ արաբներ, այդ թում եւ պաշտօնեաներ, իրենց բարեկեցութիւնը, անգամ կեանքը վտանգի ենթարկելով, ձգտում էին գէթ մի փոքր թէթեւացնել հայ անպաշտպան եւ տանջահար գաղթականների վիճակը: Բազմաթիւ են այն դէպքերը, երբ արաբ պաշտօնեաները ստանալով «Իթիհատ վէ թերաքի» էրիտթուրքական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի, էրիտթուրքական եռապետութեան՝ Էնվերի, Թալեաթի ու Ճեմալի եւ Օսմանեան կառավարութեան հրահանգները կամ նամակները՝ իրենց ենթակայ տարածքներով անցնող կամ այնտեղ գտնուող հայ գաղթականներին ոչնչացնելու մասին, հրաժարուել են կատարել այդ անմարդկային կարգադրութիւնները:

Այդպէս է վարուել Տեր Էլ Չօրի արաբ կառավարիչ Սաիդ Հաքիմը, որը ոչ միայն չսպաննեց հայերին, այլեւ կառուցեց ժամանակաւոր տնակներ՝ հայ գաղթականներին, առաջին հերթին որք երեխաներին պատսպարելու համար, ապահովելով նրանց նաեւ անհրաժեշտ սնունդով: Դրա համար, այդ ազնիւ արաբը հեռացուեց իր պաշտօնից:

Տիարպէքիի վիլայեթի ալ Բաշիրի (ալ-Բշերի-քի) գաւառապետ ալ-Սուէյդին, ստանալով հայերին սպաննելու վերաբերեալ Օսմանեան կառա-

վարութեան հրամանը, հեռագիր է ուղարկում Ստանպուլ՝ էրիտթուրքական ղեկավարութեանը, որ «իր խիղճը թոյլ չի տալիս իրեն նման գործ կատարել» եւ իր հրաժարականը ներկայացնում: Նրա հրաժարականն ընդունուում է, սակայն նա շուտով սպաննուում է թուրք զինուորների կողմից, որպէսզի դա դաս ծառայեր միւս անհնազանդ արաբների համար:

Նոյն կերպով է վարուում նաեւ Տիարպէքիի Լիճայի գաւառապետը, որն արժանանում է ալ-Սուէյդիի ճակատագրին՝ նրան նոյնպէս թուրք զինուորները սպաննում են:

Հայերի նկատմամբ անթաքոյց մարդասիրական դիրքորոշում են գրաւում Տիարպէքիի նահանգապետ Ճալալ պէկը եւ նրան յաջորդած Սամի պէկը: Ամենայն գովեստի է արժանի Սիրիայի Համա քաղաքի մուսուլման կրօնական գործիչ Ապտալլահ Մուսան, որն իր միջոցներով չորս ամսուայ ընթացքում Համայում կառուցել էր տուն-որբանոցներ հայ որբերի համար, պատսպարելով նրանց այնտեղ եւ ապահովելով հագուստով ու սնունդով:

Շատ ազնիւ գտնուեցին Իրաքի Մոսուլ քաղաքի արաբ երեւելիները: Երբ Մոսուլի արաբ կառավարիչը Ստամպուլից, էրիտթուրքերի ղեկավարութիւնից, հրաման ստացաւ հայերին ոչնչացնելու վերաբերեալ, նա, փոխանակ այդ հրամանն ի կատար ածելու, խորհրդակցութեան հրաւիրեց քաղաքի երեւելի դէմքերին՝ քննարկելու այդ հարցը եւ համապատասխան որոշում ընդունելու համար: Նրանք միաձայն որոշեցին մերժել թուրքական կառավարութեան պահանջը, յայտարարելով, որ «իրենց խիղճը թոյլ չի տալիս, որ իրենց ձեռքերը թաթախեն հայերի արեան մէջ»: Դրա շնորհիւ տասնեակ հազարաւոր հայերի կեանքը փրկուեց:

Տեղասպանութեան տարիներին հայերի նկատմամբ արաբների ասպնջականութեան մի անմոռանալի դրսեւորում հանդիսացաւ Եգիպտացիների՝ բնակչութեան եւ կառավարութեան անգնահատելի օգնութիւնը Մուսա լերան հայերին: Մուսալեռցի հայ հերոսները մի քանի ամիս շարունակ դիմադրելով թուրքական կանոնաւոր բանակի յարձակումներին, կարողացան յետ մղել նրանց եւ այդպէս էլ անձնատուր չեղան մի քանի անգամ նրանց գերագանցող թուրքական աւազակաբարոյ մարդասպաններին: Ի վերջոյ, օգնութեան եկած Ֆրանսիական նաւերը 1915 թ. Սեպտեմբերի 13-15-ը մօտ չորս հազար հայերի տեղափոխեցին Եգիպտոս: Այստեղ նրանք լաւ ընդունելութիւն գտան Եգիպտացիների կողմից: Նրանք տեղաւորուեցին Պորտ Սաիտում՝ յատուկ նրանց համար պատրաստուած ճամբարում: Ուշագրաւ է այն փաստը, որ Եգիպտոսի սուլթան Հիւսէյն Զամել փաշան հայ գաղթականներին պահելու ծախսերի մի զգալի մասը հոգաց ինքը:

Տեղասպանութիւնից հայ վերապրողները մեծ երախտագիտութեամբ են յիշում արաբ հասարակ մարդկանց, որոնք ուշադրութիւն չդարձնելով



թուրքական ասկերների սպառնալիքներին, կարողանում էին իրենց գիւղերով եւ քաղաքներով անցնող հայ գաղթականներին ուտելիք եւ ջուր տալ, օգնել նրանց, ինչով որ կարող էին: Քիչ չեն եղել դէպքերը, երբ հայ մայրերը, ճարահատեալ, արաբ կանանց էին յանձնում իրենց որդիներին ու դուստրերին, նրանց վստահում իրենց գաւակներին, յուսալով այդ կերպ փրկել մահուան դրանը յայտնուած իրենց երեխաների կեանքը: Այդ կերպ հազարաւոր հայ երեխաներ փրկուեցին մահուան ճիրաններից եւ թուրքական զինուորների գազանութիւններից:

Արաքների հայանապատ դիրքորոշման մէջ առանձնայատուկ նշանակութիւն ունեցաւ Յիճագի կառավարիչ եւ Մեքքայի շերիֆ Յիւսէյնի անձնական մօտեցումը հայերի ցեղասպանութեանը եւ երիտթուրքերի կատարած ոճրագործութեանը:

1916-1917 թթ. Յիւսէյնը՝ համայն մուսուլմանական աշխարհին հասցեագրուած իր ուղերձներում, խստօրէն քննադատում էր Միութիւն եւ Յառաջդիմութիւն երիտթուրքական կուսակցութեանը, նրա ղեկավարներին՝ Թալէաթին, Էնվերին եւ Ճեմալին, որոնք նրա կարծիքով, սխալ քաղաքականութեան եւ վատ կազմակերպութեան պատճառով Օսմանեան կայսրութիւնը տարան կործանման: Նա յատկապէս դատապարտում էր երիտթուրքերի քաղաքականութիւնը ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ: Իր տեսակէտն ապացուցելու համար, Յիւսէյնը մատնանշում էր երեք հանգամանք:

Առաջին, կայսրութեան բոլոր ժողովուրդներին թուրքացնելու երիտթուրքերի փորձերը:

Երկրորդ, նրանց թշնամական դիրքորոշումը արաքների եւ արաբական լեզուի նկատմամբ, մատնանշելով, որ արաբերէնը արգելուած էր դպրոցներում, պետական հիմնարկներում, դատարաններում, չնայած այն հանգամանքին, որ արաբերէնը աշխարհի բոլոր մուսուլմանների սուրբ գրքի՝ Քորանի, լեզուն է:

Յիւսէյնը արաբական 21 ազգային գործիչների կախաղան հանելը Ճեմալի հրամանով, նոյնպէս դիտում էր որպէս երիտթուրքերի հակաարաբական քաղաքականութեան արտայայտութիւն:

Երրորդ, պատերազմի տարիներին հայերի զանգուածային սպանող կայսրութեան տարածքում:

Իր մէկ այլ յայտարարութեան մէջ, Մեքքայի շերիֆը դատապարտում էր երիտթուրքերին, գտնելով, որ նրանց քաղաքականութիւնը հակասում էր իսլամի սկզբունքներին, որ նրանք իրենց բազում ոճիրներով «կապերը խզել են իսլամական աշխարհի, սրաբազան Քորանի եւ սուննայի հետ» եւ այդ ոճիրները «ոչ մի ընդհանուր բան չունեն իսլամի եւ իսլամական առաքինութիւնների հետ»:

Նման հետեւութիւնների նա յանգել էր նաեւ հայկական հարցում երիտթուրքերի վարած քաղաքականութեան պատճառով: Եւ նա այդ մասին անելի յստակ ու բացայայտ խօսում է 1916 թ. իր որդուն՝ Էմիր Ֆէյսալին եւ Էմիր Ապտալ Ազիզ Ալ

Ճարպային, (որոնք ղեկավարում էին արաբական ապստամբ բանակի գործողութիւնները սիրիական ճակատում), ուղղուած նամակում եւ պահանջում նրանցից ամեն տեսակի օգնութիւն ցոյց տալ հայ գաղթականներին եւ «պաշտպանել նրանց այնպէս, ինչպէս դուք պաշտպանում էք ձեր անձը, ձեր երեխաներին եւ ձեր ունեցուածքը, որովհետեւ նրանք (հայերը - Ն.Յ.) մուսուլմանների զիմմիներն (ենթահովանաւորեալները - Ն.Յ.) են»: Այստեղ Յիւսէյնը նկատի ունի այն հանգամանքը, որ ըստ Քորանի դրոյթների եւ մուսուլմանական իրաւունքի, քրիստոնեաները համարում էին մուսուլմանների կողմից հովանաւորուողներ:

Վերջին տասնամեակներում համաշխարհային գիտութեան մէջ ձեւաւորուել է մի նոր գիտութիւն՝ ցեղասպանագիտութիւն, որը նորովի մօտեցում է ցուցաբերում ցեղասպանութեան պատճառների, նախադրեալների, բնոյթի, պետութիւն-հասարակութիւն փոխարարութիւնների եւ այլ յարակից հարցերի լուսաբանութեան բնագաւառում:

Յայկական եւ հրեական, ապա նաեւ նրանց յաջորդած ցեղասպանութիւնների վերլուծութեան հիման վրայ, 1970-ական թուականներին ցեղասպանագիտութեան կողմից առաջ քաշուեց ցեղասպան պետութեան եւ ցեղասպան հասարակութեան վերին աստիճանի կարեւոր տեսադրոյթը, որը մեր կարծիքով, խարսխուում է մի քանի առանցքային նշանակութիւն ունեցող սկզբունքների վրայ:

Առաջին, ցեղասպանութիւնը պատահական չի լինում: Նա սովորաբար ունենում է տուեալ հասարակութեան ընդերքում ձեւաւորուած նկատելի եւ աննկատ նախադրեալներ, որոնք ներքին եւ արտաքին բարենպաստ պայմանների դէպքում ի յայտ են գալիս եւ անխուսափելիօրէն յանգեցնում ցեղասպանութեան փորձերի կամ ցեղասպանութեան:

Երկրորդ, ցեղասպանութիւնը հնարաւոր է միայն իւրայատուկ կառուցուածք ունեցող հասարակութիւններում եւ այնպիսի պետութիւններում, որոնք տիպաբանօրէն պատկանում են բռնատիրական վարչակարգ ունեցող երկրների շարքին: Այդ վարչակարգը կարող է լինել զարգացման տարբեր աստիճանների վրայ գտնուող ռազմաֆեոդալական, դիկտատորական եւ կամ ամբողջատիրական վարչակարգ:

Երրորդ, սակայն այդ հանգամանքն ինքնին վերցրած դեռեւս բաւարար չէ ցեղասպանութեան համար: Կարեւոր հանգամանք են տեսական փոսթուլաթները, որոնց վրայ խարսխուում է ցեղասպանութիւն իրագործող պետութիւն-հասարակութիւնը: Դրանց մէջ առաջնային է տիրապետող ազգի գերազանցութեան գաղափարը տուեալ պետութեան շրջանակներում բնակուող մնացած բոլոր ազգութիւնների նկատմամբ, մի կողմից, եւ «օտարածին» մարմիններից ազատուելու եւ էթնիկական առումով «մաքուր» եւ միատարր երկիր ստեղծելու հիմնադրոյթը միւս կողմից: Էթնիքապէս «մաքուր» պետութիւն ստեղծելու այլ ուղի, ինչպէս վկայում է



պատմական փորձը, քան բռնութիւնն է, գոյութիւն չունի: Իսկ բռնութիւնից մինչեւ ցեղասպանութիւն՝ մի քայլ է միայն:

Չորրորդ, ցեղասպան պետութեան համար անհրաժեշտ է նաեւ մէկ այլ նախապայման՝ տուեալ հասարակութեան դիրքորոշումը: Յեղասպանութեան իրագործման համար տուեալ հասարակութիւնը ոչ միայն չպետք է ընդվզի Էթնիկական «մաքման» դեմ, որը կարող է իրականացուել ֆիզիքական ոչնչացման կամ բռնագաղթի ճանապարհով, այլեւ ընդունի եւ պաշտպանի այդ քաղաքականութիւնը: Այդ պաշտպանութիւնը կարող է դրսեւորուել երեք մակարդակներով՝ ակտիւ պաշտպանութիւն, փասիւ պաշտպանութիւն եւ անտարբերութիւն: Բոլոր երեք դիրքորոշումներն էլ նպաստաւոր են ցեղասպանութեան իրագործման եւ այն իրագործող ուժերի համար:

Հինգերորդ, խիստ կարեւոր է, որ ցեղասպանութիւնն իրագործող պետութեան ներսում գոյութիւն չունենան ցեղասպանութիւնն արգելակող կամ խոչընդոտող քաղաքական, կուսակցական, հասարակական, կրօնական եւ ռազմական ուժեր:

Վեցերորդ, ցեղասպանութեան համար անհրաժեշտ նախապայման է պետութեան եւ հասարակութեան համընդհանուր շահագրգռութիւնն եւ շահերի համընկնում: Ուստի ցեղասպանութեան հարցում պետութիւնը չի կարելի անջատել հասարակութիւնից, առաւել եւս, միմեանց հակադրել եւ այդ կերպ ցեղասպանութեան պատասխանատուութեան ամբողջ բեռը գցել պետութեան, պետական կառավարման մեքենայի վրայ: Յեղասպանութեան հարցում պետութիւնը եւ հասարակութիւնը՝ կազմում են մէկ ամբողջութիւն:

Եթէ այս բոլոր նախադրեալները առկայ են, ապա տուեալ պետութիւնը դասուում է ցեղասպան պետութեան, իսկ հասարակութիւնը՝ ցեղասպան հասարակութեան շարքը:

Երբ մենք ցեղասպան պետութեան այս հասկացողութիւնը կիրառում ենք Հայոց Յեղասպանութիւնն իրագործած Օսմանեան կայսրութեան նկատմամբ, ապա ակնյայտ է, որ XIX դարի եւ XX դարի առաջին քսանամեակի Օսմանեան կայսրութիւնն առանց վերապահութեան պետք է համարուի ցեղասպան պետութիւն, իսկ թուրքական հասարակութիւնը՝ ցեղասպան հասարակութիւն:

Այդ առումով, Օսմանեան կայսրութիւնը համարում է դասական ցեղասպան պետութիւն, որի կողքը, որպէս դասական ցեղասպան պետութիւն, կարելի է դնել իրեական հողընթաց իրականացրած նացիստականն Գերմանիային:

Ցեղասպան պետութիւնը ողբերգութիւն է պատճառում ոչ միայն ենթակայ ազգերին, այլեւ պատժում սեփական ժողովրդին՝ նրան, կամայ թէ ակամայ, ոճրագործութեան մեղսակից դարձնում: (Այս մասին աւելի մանրամասն տես, Ն. Յովհաննիսեան, Հայոց Ցեղասպանութիւնը ցեղասպանագիտութեան հայեցակարգային համակարգում, Ե., 2002):

Օսմանեան ցեղասպան պետութեան շրջանակներում իրագործուած 1915 թ. Հայոց Ցեղասպանութեան հարցում մենք տեսնում ենք թուրքական պետութեան եւ թուրքական հասարակութեան միասնականութիւն, որի շրջանակներում թուրքական պետութիւնը եւ թուրք ժողովուրդն ունեն մեղքի իրենց բաժինը:

Ահա այս ֆոնի վրայ, Օսմանեան կայսրութիւնում առկայ ցեղասպանածին պայմաններում, աւելի է ընդգծուում արաբների ասպնջականութիւնը, նրանց մարդասիրական վերաբերմունքը ցեղասպանութեան ենթարկուած հայերի նկատմամբ, որը, բնականաբար, առաջ է բերել նրանց խորը երախտագիտութիւնը եւ շնորհակալական ամենաանկեղծ եւ ամենաշերմ գգացմունքները արաբ ժողովուրդների հանդէպ: Արաբների այդ ազնիւ դիրքորոշումն արժանացել է հայերի, ինչպէս արաբական երկրներում յայտնուած գաղթականների, այնպէս էլ համայն հայութեան ամենաբարձր գնահատականին, որը մէկ անգամ չէ, որ նրանց կողմից արտայայտուել է ի լուր աշխարհի:

1919 թ. Մայիսի 9-ին Դամասկոսի քաղաքային սրահում տեղի ունեցաւ Օսմանեան տիրապետութիւնից պատմաաշխարհագրական Սիրիայի ազատագրումն իրականացրած Էմիր Ֆէյսալի հանդիպումը Սիրիայի, Պաղեստինի, Յորդանանի եւ Լիբանանի ղեկավար գործիչների եւ հասարակայնութեան ամենալայն շրջանակների ներկայացուցիչների հետ: Նրանց առջեւ Հիւսէյնի որդին դրեց իր քաղաքականութեանը վստահութիւն տալու հարցը:

Ի պատասխան այդ հարցման, առանձին յայտարարութիւններով հանդէս եկան այդ երկրների եւ նրանց տարբեր շրջանների ներկայացուցիչները, որոնք իրենց վստահութիւնը յայտնեցին Ֆէյսալին եւ նրա քաղաքականութեանը:

Դամասկոսի սրահում կայացած այդ պատմական նիստում ներկայ էր նաեւ Դամասկոսում, Հալեպում եւ Սիրիայի այլ վայրերում հաստատուած հայ գաղթականների ներկայացուցիչը: Նրան եւս իրաւունք է տրուում ելոյթ ունենալ, որն իր խօսքում պաշտպանում է արաբներին ազգային անկախութեան համար մղած նրանց պայքարում եւ առիթից օգտուելով, ամբողջ հայութեան անունից շնորհակալութիւն յայտնում արաբներին նրանց բարի վերաբերմունքի համար: Հայ պատուիրակը, ներկաների որոտընդոստ ծափահարութիւնների տակ յայտարարում է «Հայերի պատմութեան մէջ արաբների անունը կը գրուի ոսկէ տառերով»:

Հայերի դիրքորոշումն այդ հարցում չի փոխուել մինչեւ օրս:

Նա համոզմունքի ուժ ունի:



ԵԳԻՊՏԱՐԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՈԳԵԿՈՉԷ ՎԱՅՈՑ ՄԵՃ ԵՂԵՈՆԻ 90-ԱՄԵԱԿԸ

Եգիպտահայութիւնը Ապրիլ 24-ին համագաղութային ուժերով ոգեկոչեց Ապրիլեան Եղեռնի 90-ամեայ տարելիցը եւ վերանորոգեց իր ուխտը:

«Ուխտը՝ գոյատեւելու՝ եւ ապրելու՝ որպէս հայախօս հայ ժողովուրդ, եւ պահանջելու ճանաչումը մեր դատին եւ ապա՝ վերադարձումը մեր հողերուն եւ իրաւունքներուն»:

Ոգեկոչելով ու յիշատակելով անցեալը, եգիպտահայութիւնը այդ օր նաեւ կու գար իր «խորին երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնելու Եգիպտոսի Պետութեան եւ եգիպտացի արաբ ժողովուրդին, Եղեռնէն վերապրած ու Եգիպտոս կայք հաստատած հայերուն հանդէպ իրենց ցուցաբերած ազնիւ ու բարի վերաբերմունքին համար»:

Յելիոպոլիս

Ապրիլ 24-ի առաւօտեան ժամը 11.00-ին Յելիոպոլիս Ս. Թերեզա Եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ Սուրբ Պատարագ: Պատարագը մատուցեց եւ օրուան պատշաճ քարոզ արտասանեց Աղեքսանդրիոյ Կաթողիկէ Յայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գրիգոր Օգոստինոս Սրբ. Արք. Գուսան:

Ապրիլեան գոհերուն ու նահատակներուն հոգիներուն հանգստեան համար, պատարագէն ետք, Եկեղեցիին շրջափակին մէջ տեղադրուած Ապրիլեան Յուշարձանին առջեւ տեղի ունեցաւ հոգեհանգիստ եւ մոմավառութիւն:


Գահիրէ

Ապրիլ 24-ի երեկոյեան ժամը 7.00-ին հովանաւորութեամբ եգիպտահայոց Յոգեւոր Պետերուն, նախաձեռնութեամբ Գահիրէի Ազգային Իշխանութեան ու մասնակցութեամբ Գահիրէի բոլոր կազմակերպութիւններուն, տեղի ունեցաւ Եղեռնի 90-ամեակի ոգեկոչումը Գա-

հիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Այդ օր Եկեղեցին կը յորդէր հայութեամբ:

Ներկաները երկիւղածութեամբ հետեւեցան մատուցուած հոգեպարար Սուրբ Պատարագին: Պատարագէն Արժ. Տ. Չեսնոն խաչակիր քնկ. Բարսեղեան:

Սուրբ Պատարագի աւարտին Եգիպտահայոց Թեմի Առաջնորդական Տեղապահ Յոգշ. Աշոտ վրդ. Մաացականեան ընթերցեց Ամենայն Յայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Յայրապետին այս առթիւ յղած



Սրբատառ Կոնդակը, որմէ ետք Եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր մը՝ երգ եւ ընթերցում, մասնակցութեամբ Գահիրէի «Արաքս» երգչախումբին, ղեկավարութեամբ Սօ. Միհրան Ղազէլեանի:

Օրուան հանդիսավար տոքթ. Սուրէն Պայրամեանի հակիրճ խօսքէն ետք նախ ելոյթ ունեցաւ Յայ Կաթողիկէ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Գրիգոր Օգոստինոս Սրբ. Արք. Գուսանը, հայ կրօնաւորներուն յատուկ հայրենաշունչ եւ կրօնաշունչ խօսքով:

Ապա՝ իր խօսքը ըսելու հրաւիրուեցաւ Եգիպտոսի մօտ ՀՀ Դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեան: Անցեալի եւ

Ներկայի քաղաքական անցուղարձներուն տեղեակ պր. Դեսպանին ելոյթը այժմեական էր, կուռ եւ բովանդակալից, որուն մէջ առկայ էր Թուրքիոյ կողմէ ցեղասպանութեան ուրացումին դատապարտման կողքին, երախտագիտութիւնը հանդէպ արաբ ժողովուրդին: (Այս երկու ելոյթները կը հրատարակենք առանձինն):

Հանդիսութեան աւարտին Եղեռնէն վերապրած տիար Վահրամ Մարտիրոսեան, Եղեռնի 90-ամեակը խորհրդանշող 90 կանթեղներէն առաջինը ձեռքին, վառած կանթեղները բռնած կղերականներն ու Յայաստանի դեսպանը, եգիպտահայ գաղութի գանազան կառոյցներու



ներկայացուցիչներուն, աշակերտներուն եւ ժողովուրդին թափօրը առաջնորդեցին դէպի եկեղեցւոյ շրջափակին մէջ կանգնած Խաչքար-Յուշարձանը, ուր գետեղուեցան կանթեղներն ու ծաղիկները:

Ապա, բաց երկինքին տակ, առ Աստուած բարձրացան հոգեհանգստեան պաշտօնի աղօթքները, մէկ անգամ եւս անշիրիմ մնացած մեր բիրաւոր զոհերուն հոգիներուն համար հանգիստ հայցելու Ամենակալէն:

Աղեքսանդրիա

Աղեքսանդրիոյ մէջ եւս Ապրիլ 24-ի առաւօտեան Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցիին մէջ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ:

Պատարագը մատուցեց եւ քարոզեց Յոգշ. Տ. Գրիգոր քիւյ. Մուրատեան եւ ապա՝ ընթերցեց Վեհափառ Հայրապետին Ապրիլեան Եղեռնին առթիւ յղած սրբատառ կոնդակը:

Եղեռնի զոհերուն 90-րդ տարելիցին առթիւ հոգահանգստեան պաշտօն կատարուեցաւ Եղեռնի Յուշարձանին մօտ, ուր հաւաքուած ժողովուրդը վառած մոմեր գետեղեց Յուշարձանին առջեւ:

Եկեղեցական արարողութիւններուն յաջորդեց, Եգիպտահայ Հոգեւոր Պետերուն հովանաւորութեամբ, Աղեքսանդրիոյ Ազգային Իշխա-




նութեան նախաձեռնութեամբ եւ աղեքսանդրիահայ բոլոր կազմակերպութիւններուն մասնակցութեամբ պատրաստուած յուշահանդեսը Պօղոսեան Ազգային Վարժարանի հանդիսասրահին մէջ:

Ելոյթ ունեցան «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» երգչախումբը եւ Պօղոսեան Ազգային Վարժարանի աշակերտութիւնը, ղեկավարութեամբ տիկին Մարիա Հալաճեանի:

Օրուան բանախօսն էր տոքթ. Արմէն Գավուրճեան:

Հանդիսութենէն ետք տեղի ունեցաւ հոգեճաշ:





ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԸԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐ ՕԳՈՍԿԻՆՈՍ ՍՐԲ. ԱՐԲ. ԳՈՒՄԱՆԻ ԽՕՍԵՐԸ

Հոգեշնորհի Հայր Սուրբ
Վսեմաշուք Պր. Դեսպան Հայաստանի Հանրապետության Եգիպտոսի մէջ
Հոգեւոր Եղբայրներ
Առաքինազարդ Քոյրեր
Սիրելի եւ պատուական ազգայիններ Յարուցեալ Հայորդիներ

Վահան Թեքէեան կ'ըսէ «Ահաւոր բան մը այնտեղ կը կատարուի մութին մէջ ... Ազգ մը ամբողջ կը սպաննեն ...»

Ու ես հպարտութեամբ կ'ըսեմ՝ Գեղեցիկ բան մը այնտեղ այսօր կը կատարուի լոյսին եւ արեւին տակ. Ազգ մը ամբողջ կ'ապրի Աշխարհիս տարածքին, կ'ոգեկոչէ 1915-ի հայոց անմեղ զոհերուն յիշատակը:

Դարձեալ 24 Ապրիլ. 90 տարի – 90 անգամ 24 Ապրիլ Նպատակը այս թուականին գայրո՞յթ, ցատո՞ւմ, փոթորի՞կ, կիրք, վրեժ, արիւնը՝ արիւնով մաքրել, մահը՝ մահով: Ո՛չ: Հարիւր անգամ – ո՛չ հազար անգամ – ո՛չ միլիոն անգամ – ոչ: Այդ միայն յատուկ է անտառի վայրագ գազանին, ու մէյ մըն ալ՝ Հայաստանի լուսաւոր սահմանէն անդին գոյութիւն ունեցող մարդակեր գազան մարդուն:

Նպատակը այդ թուականին:

Նախ՝ մէկ ու կէս միլիոն հայ մարդուն արիւնին արդար պահանջը:

Ապա՝ յիշեցնելու աշխարհին, թէ որքան ատեն որ մէկ հայ կայ երկրի վրայ, Լուսաւորչի կանթեղը անձեթ չմսար, Հայկեան Ոգին չտկարանար ու Մեսրոպ Մաշտոցի ալեհեր լեզուն՝ միշտ պիտի մանկանայ մանկան շուրթներուն ...:

Այդ գիտակցութիւնը այսօր, նոր սերունդին մէջ կ'ապրի՞, կը ներշնչէ՞ տակաւին:


Պատասխանս պարզ է ու կտրուկ: Շնորհիւ մեր Նահատակներուն ... Այո:

Որովհետեւ այդ գիտակցութիւնը ջրդեղուած է կրակի ճանապարհով, չգրուած ու չգրուելիք տանջանքով, արիւնի ճապաղիքով, արցունքի ծովով եւ կեանքի գնով:

Այս մէկն ալ՝ աշխարհ թող գիտնայ ինչպէս 17 դարեր առաջ մեր Մեծն Լուսաւորիչը կը ծանուցաներ հեթանոս արքային պատգամ մը անետարանական ճշմարտութեամբ, նոյնը 17 դարեր յետոյ՝ այս 90 ամեակին, մենք կը գոռանք արար աշխարհին՝ Նահատակներու արիւնով չեն ջնջուիր ազգ ու կրօն, հայրենիք ու մշակոյթ: Անոնց արիւնը, որովհետեւ, սովորական արիւն չէ, այլ արիւն գարնան անձրեւի պէս արգասաբեր, աւիշ ու կեանք պարգեւող:

Աւելին: Նահատակներու արիւնը եղած է միշտ՝ դարերու մէջ – դարերը դիմակալող աղբիւր, չպատմուած ու չպատմուելիք ոգեղէն ուժ:

Վկայ երեկուան աշխարհը Հայկեան քար ու քանդ



եղած, դարձած գերեզման ամայացած, մէկ ու կէս միլիոն հայ մարդ մորթուած, այնպէս՝ ինչպէս անատուններն իսկ չեն մորթուիր, մնացորդած մը՝ անտեր ու անտիրական, լքուած իր ճակատագրին. եւ այսօր ունենալ ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ու ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ, 7 միլիոն ... հայ ժողովուրդ ամէն տեղ:

Ու հայը, այսօր, անցեալ չէ, երրորդ հազարամեակի սեմին կեցած է քաղաքակրթուած մեծ ազգերու կողքին՝ գիտութեան ու արուեստի հանճարներով՝ իր գաւակներով:

Սիրելի հայրեր ու մայրեր

Սիրելի երիտասարդ – երիտասարդուհիներ

Հայը՝ ուր ալ եղած է գիտցած է տալ, ու տալ իր հոգիէն, իր մտքէն, իր արիւնէն: Տալ անսպառ, անծայր, անվերջ, տալ միշտ առանց հաշուի ու կշռի:

Վճռելը:

Եթէ հաւատարիմ ենք մեր Ապրիլեան Նահատակներուն, ու կ'ապրինք եւ կը գործենք անոնց պէս, կառչած մեր հաւատքին, մեր մշակոյթին եւ մեր լեզուին, այն ատեն կրնանք գոռալ այս 90 ամեակին, մեր մեծ ու Նահատակ բանաստեղծ Վարուժանին հետ արար աշխարհին, թէ մեր հայութեան վարդահեղեղ արշալոյսին ոտնաձայնը կ'առնենք

Յարուցեալ ու քաջ հայեր Տեր Չօրի

Անապատեն ու Ղարաբաղի դաշտերէն

Մենք սուր չունինք, ունինք գրիչ վասն ճշմարտութեան

Մենք զէնք չունինք, ունինք խաչ վասն խաղաղութեան:

Մենք պատերազմ չենք հռչակեր

Մենք Սուրբ ու արդար դատը կը պահանջենք:

Տանք հաւատքով մեր ինդրանք պաղատանքն բարեխնամ Աստուծոյ, որպէսզի գործադրութեան տայ իր խօսքը «Իմա է վրեժխնդրութիւնը եւ ես պիտի հատուցանեմ անոնց (Յռ. 12.19)»:

Գրիգոր Օգոստինոս Սրբ. Արք. Գուսան Առաջնորդ Աղեքսանդրիոյ Կաթողիկէ Հայոց



ԵԳԻՊՏՈՍԻ ՄՕՏ ԸՇ ԴԵՄՊԱՆ ՏՈՔԹ. ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԽՕՍԵՐ

Հոգեւոր Հայրեր, Թեմական Խորհրդի յարգարժան ատենապետ, Եգիպտահայ Համայնքի ներկայացուցիչներ, Սիրելի հիւրեր,

Այս տարի Հայաստանում եւ Սփիւռքում բազմաթիւ միջոցառումներ են իրականացւում Հայոց Տեղասպանութեան 90-ամեակի կապակցութեամբ: Մենք յարգանքի տուրք ենք մատուցում Օսմանեան Կայսրութիւնում 1,5 միլիոն նահատակուած մեր հայրենակիցների յիշատակին:

Մեզ հայերիս շատ յաճախ են խորհուրդ տալիս, «մոռացե՛ք ձեր անցեալը եւ շարժուե՛ք առաջ»: Սակայն խորհուրդ տուողները չեն գիտակցում այն պարզ հանգամանքը, որ մոռանալ դեռեւս չի նշանակում ներել եւ ճիշտ հակառակը: Մոռացութիւնը միշտ չէ որ արդիւնաւետ է եւ իմաստուն: Այն արժեզրկում է ազգային փորձառութիւնը, որը հիմնասիւններից է ժողովրդի ազգային դիմագծի: Իսկ եթէ խօսենք ներելու մասին, ապա ներում հայցող կողմը առնուազն պետք է որպէս առաջին քայլ ճանաչի իր սխալը, կատարած յանցագործութիւնը:

Յաւօք մինչ օրս Թուրքիան ոչ միայն շարունակում է ժխտել ցեղասպանութեան կատարման փաստը, այլեւ թշնամական դիրքորոշում է որդեգրել Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ՝ անկախութեան առաջին իսկ օրից շրջափակման մէջ դնելով հայկական Նորաստեղծ պետութիւնը եւ հրաժարուելով նրա հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել:

Այսօր՝ Ապրիլի 24-ին, հայ ժողովուրդն ու ողջ քաղաքակիրթ աշխարհը ոչ միայն խոնարհուում են հայ անմեղ զոհերի յիշատակի առջեւ, այլեւ վճռականօրէն իրենց ձայնն են բարձրացնում կատարուած ոճրագործութիւնը դատապարտելու եւ ստիպելու Թուրքիային այն ճանաչելու նպատակով:

Այստեղ կը ցանկանայի որոշակի յստակեցում մտցնել Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական շրջանակների վերաբերեալ:

Օտարերկրեայ իսկ երբեմն նաեւ հայկական քաղաքական եւ գիտական շրջաններում յաճախ ցեղասպանութեան իրականացումը սահմանափակում է միայն 1915 թուականով: Սակայն խօսելով Հայոց ցեղասպանութեան մասին պետք է միշտ յիշենք, որ **այն հանդիսանալով մարդկութեան պատմութեան առաջին ամենատեսական ցեղասպանութիւններից մէկը, նախապատրաստուել ու իրականացուել է հայ ժողովրդի պատմական հայրենիքում տարբեր փուլերով եւ մեթոտներով, շուրջ կէս դար՝ 1876–1923 թուա-**



կաններիս ընկած ժամանակահատուածում: Առաջին Աշխարհամարտը յարմար առիթ ընձեռեց երիտթուրք կառավարիչներին՝ տարիներ ի վեր Օսմանեան Կայսրութիւնում պարբերաբար իրականացուող հայերի բնաջնջման հրեշաւոր ծրագիրը աւարտին հասցնելու համար: 1915 թուականն ուղղակի դարձաւ ցեղասպանութեան գագաթնակէտը՝ երբ Ապրիլի 24-ին հայ ժողովուրդը գլխատուեց, կորցնելով իր մտաւորականութեան սերուցքը:

Ներկայումս, երբ թուրքական կողմը ժխտում է ցեղասպանութեան փաստը, փորձելով

արդարացնել իր գործողութիւնները առաջին Աշխարհամարտի օրերին «պատերազմական խառնաշփոթի», «քաղաքացիական պատերազմի», «հայերի ապստամբութեան, դավաճանութեան» եւ այլ ցինիկ ու անհիմն պատճառաբանութիւններով, մեր կողմից ցեղասպանութեան ժամանակագրական վերոյիշեալ շրջանակների արծարծումն ու շարունակական հնչեցումը չափազանց կարեւոր է: Այն անհրաժեշտ է նաեւ յանցագործութեան իրաւաբանական յստակ սահմանման հարցում:

Հայաստանի անկախացումից ի վեր ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը որակական նոր լիքք եւ ուղղուածութիւն ստացաւ:

Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցը դրուած է մեր պետութեան արտաքին քաղաքականութեան օրակարգում: Ինչպէս գիտեք, Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու համար Թուրքիայի երկու հիմնական նախապայմաններից մէկը վերաբերում է Հայոց ցեղասպանութեանը: Թուրքիան պահանջում է, որ Հայաստանը եւ հայերը մի կողմ դնեն ցեղասպանութեան խնդիրը եւ դադարեցնեն ցեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղուած իրենց աշխատանքները միջազգային կազմակերպութիւններում եւ առանձին երկրների հետ:

Դրա պատասխանը միանշանակ է. մենք՝ հայերս Հայաստանում եւ Սփիւռքում չենք կարող մի կողմ դնել կամ մոռանալ 1915 թ. Օսմանեան կայսրութիւնում իրականացուած Հայերի Տեղասպանութիւնը: Մենք նաեւ կտրականապէս մերժում ենք պատմական բանավեճ սկսելու թուրքական ղեկավարութեան վերջերս հնչեցրած կոչերը, վստահ լինելով, որ այն պարզապէս միջոց է ճշմարտութեան ու միմեանց հետ հաշտուելու գործընթացը յետաձգելու համար:

Հայոց Տեղասպանութեան ճանաչումը Հայաստանի համար ոչ միայն բարոյական եւ իրաւական նշանակութիւն ունի, այլեւ, առաւելապէս, **ռազմավարա-**



կան՝ կապուած ազգային անվտանգութեան ապահովման հետ: Միջազգային հանրութեան կողմից ցեղասպանութեան ճանաչման փաստը՝ զգալիօրէն կարող է նուազեցնել հայկական պետականութեան նկատմամբ Թուրքիայի կողմից ոտնձգութիւնների հնարաւորութիւնը: Յատկապէս ներկայի պայմաններում երբ դեռ վերջնականապէս լուծուած չէ Լեռնային Ղարաբաղի հիւսիսարեւելիկ, իսկ ԶԶ-ի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու Թուրքիայի շարունակ մերժումը որոշակիօրէն վկայում է վերջինիս կողմից Հայաստանի պետականութիւն ունենալու իրաւունքը ժխտելու փորձի մասին:

Միւս կողմից ցեղասպանութեան գոհ դարձած հայերս, որպէս նորմալ յարաբերութիւնների հաստատման նախապայման, երբեք ոչ Թուրքիայի, ոչ էլ այլ երկրի առջեւ չենք դրել ցեղասպանութեան ճանաչումը:

Պետք է նաեւ արձանագրենք, որ այսօր Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը դադարել է լինել միայն Հայաստանի եւ համայն հայութեան ներքին խնդիր, այն ձեռք է բերել նաեւ համամարդկային նշանակութիւն:

Միջազգային իրաւունքի վրայ հիմնուած ցեղասպանութեան ճանաչման Հայաստանի եւ սփիւռքահայութեան արդարացի պահանջը, որն առնչւում է արդարադատութեան իրականացման, պատասխանատուութեան եւ ցեղասպանութեան հետեւանքների վերացման խնդիրներին, վերաբերում է ոչ միայն հայ ժողովրդին: Այն ուղղակի կամ անուղղակի վերաբերում է ողջ մարդկութեանը, առաջին հերթին՝ հենց Թուրքիայի եւ թուրքերի ապագային:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան ժխտումը իր բացասական հետեւանքն է թողնում ողջ մարդկութեան վրայ: 20-րդ դարի պատմութիւնը միանշանակ հաստատեց այն, որ ցեղասպանութեան անպատժելիութիւնը ծնում է ցեղասպան նոր գործողութիւններ: Ուստի Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը կարեւոր է նաեւ հետագայում այլ ցեղասպանութիւնների իրականացումը կանխելու համար:

Հայոց Ցեղասպանութիւնը վաղուց դարձել է անարդարութեան եւ իրաւագրկութեան սիմպոլ: Այսօր չի կարելի խօսել մարդու իրաւունքների, ժողովրդավարութեան, քաղաքակրթութեան եւ բարոյականութեան մասին աչքերը փակելով մարդկային պատմութեան ամենամեծ յանցագործութեան վրայ: Իրավունքն ու բարոյականութիւնը պահանջում են բոլոր ազգերից եւ պետութիւններից նրանց յստակ եւ պարզ դիրքորոշումը Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ:

Բազմաթիւ երկիրներ ելնելով հենց վերոյիշեալ այդ նորմերից արդէն իսկ ճանաչել են Հայոց Ցեղասպանութիւնը: Վերջին տարիների ընթացքում յատկապէս, ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը հետագայ ծաւալման եւ ընդարձակման միտում ունի:

Այստեղ չեմ կարող չանդրադառնալ այն հանգամանքին, որ Հայոց Ցեղասպանութեան դժնդակ օրերին արաբ ժողովուրդը ոչ միայն կտրականապէս դատապարտեց հրեշաւոր յանցագործութիւնը, այլեւ կոչ անելով «ամենայն աջակցութիւն ցուցաբերել տա-

նապէալ հայերին», իր տան հիւրընկալ դռները բացեց մագապուրծ եղած հազարաւոր հայ փախստականների առջեւ: Իր հերթին երախտապարտ հայ ժողովուրդը անմնացորդ նուիրուելով իրեն ապաստան տուած արաբական երկրներին, ջանք ու եռանդ չխնայեց նրանց շէնացման ու զարգացման համար:

Կարծում եմ եկել է ժամանակը, որ արաբական երկիրները, հիմնուելով առաջին հերթին համամարդկային արժեքների, ինչպէս նաեւ իրենց իսկ կողմից քարոզած բարոյականութեան ու արդարութեան վեհ սկզբունքների վրայ, հաւատարիմ մնալով հայ-արաբական բազմադարեայ բարեկամութեանը, նոյնպէս որդեգրեն յստակ դիրքորոշում՝ Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ:

Ի հարկէ, Հայաստանը եւ միջազգային հանրութիւնը առաջին հերթին ակնկալում են Ցեղասպանութեան ճանաչումը հենց Թուրքիայի կողմից. **կամ ժամանակակից Թուրքիան կը ճանաչի Հայոց Ցեղասպանութեան փաստը եւ կը դատապարտի կատարուած յանձագործութիւնն ու նրա հետեւանքները, այդպիսով քաւելով թուրքական պետութեան մեղքերը, կամ էլ կը շարունակի հերքել Ցեղասպանութեան փաստը եւ հանդէս գալ այդ ծանրագոյն միջազգային յանձագործութեան իրաւայաջորդի եւ շարունակողի դերում:** Ընտրութիւնը չափազանց դժուար է սակայն միակ հնարաւորը: Այն Թուրքիայի կառավարիչներից կը պահանջի խիզախութիւն եւ իրապէս նոր մտածողութիւն:

Իսկ մեզանից ներկայ փուլում կը պահանջուի ոչ միայն միասնականութիւն եւ հեռատեսութիւն՝ հետեւողականօրէն ու ծրագրուած կերպով Ցեղասպանութեան միջազգային ճանաչմանն ուղղուած մեր գործունեութիւնը շարունակելու, այլեւ կամք եւ վճռակալութիւն՝ Հայաստանի Հանրապետութեան զարգացումն ու առաջընթացը անշեղօրէն ապահովելու ուղղութեամբ:

Միմիայն հզօր ու բարգաւաճ Հայկական Պետութեան առկայութիւնը՝ իր կազմակերպուած եւ կենսունակ Սփիւռքով կարող է վերջնականապէս պարտադրել Թուրքիային ու նրա ռազմաքաղաքական դաշնակիցներին ճանաչել Ցեղասպանութիւնը:

Այսօր յարգանք ընծայելով մեր նահատակներին, մենք պետք է յստակ գիտակցենք, որ նրանց յիշատակը յաւերժացնելու ուղղութեամբ ամենաարժեքաւոր ներդրումը կը լինի հենց վերոյիշեալ նպատակի իրականացումը:

Հայ ժողովուրդն իր պատմութեան ընթացքում բազում արհաւիրքներ է տեսել, ինչէր ասես չի պատահել մեր հիւնաւորը եւ իմաստուն ժողովրդի հետ, սակայն մնացել է հաւատքը, ոգին, գաղափարը, տաղանդը, տեսիլքը, այն բոլորը ինչը մշտապէս հիմք է հանդիսացել նորանոր վերելքների եւ ստեղծումների համար:

Կասկած չունեմ, որ այսօր էլ այդ հաւատքն ու արդար դատի գաղափարը մեզ ուղղորդելու է դէպի այն ապագան, որի մասին այդքան երազել են մեր նախնիները:



ՇՆՊՆԱԿԱՅԻՆ ԻՆՔՆԱՏԻՊ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ «ՆՈՐԱ ԱՐՄԱՆԻԻ ՇԵՏ ԲԱԶՄՈՑԻՆ ՎՐԱՅ»



Կեանքի մը եզակի պատմութի՞ւնն էր ներկայացուածը: Ո՛չ, Նորա Արմանիի սերունդին պատկանող հազարաւորներու կեանքին պատմութիւնն էր: Երեք սերունդներու ապրուած, ոչ երեւակայական, այլ իսկական ամփոփ պատմութիւնը: Կեանքի մը պատմութիւնը, որ ոչ հիմնական տարբերութիւններով լոյնն է այն հայերուն համար, որոնք 1915-ին Օսմանեան Թուրքիոյ կողմէ կազմակերպուած ցեղասպանութեան հետեւանքով, հարկադրաբար ձգած էին իրենց երկիրը ու կայք հաստատած երկրագունդին վրայ քիչ մը ամէն տեղ, հազարամէկ դժուարութիւններով ընտելացած այդ վայրերուն, ժողովուրդին, բարքերուն, ընտանիք կազմած ու բարգաւաճած եւ երբ իրենց առօրեայէն յոգնած մարմինները հանգչած էին «բազմոցին վրայ», մտքով սլացած էին «երկիր», իրենց կարօտ դարձած աչքերը յառած հեռու, «երկրէն» բերած իրենց յուշերը որպէս օրօր ու հեքիաթ պատմած՝ իրենց զաւակներուն ու թոռներուն:

Նորեմբերի 16-ին մեզի համար սովորական դարձած այս պատմութեան ներկայացումը Ապրիլ 3, 2005-ին Գահիրէի «Կուստուրիա» թատերասրահին մէջ, մօտ մէկ ժամ 20 վայրկեան, մեզ գամուած պահեց մեր աթոռներուն: Ինչո՞ւ ոչ միայն ներկայ հայ հասարակութիւնը այլ եւ օտարները քար լռութեան մէջ ակնդիր եւ ունկնդիր եղան Նորա Արմանիի հեղինակային այս ներկայացման:

Նորան առանձին էր բեմին վրայ իր պատմութիւնը ներկայացնելու համար չունէր օգնական դէմքեր, ըսենք մեծ մայր, մայր, բարեկամ, ամուսին ...:

Բեմին յարգարանքը վերին աստիճանի համեստ էր: Խորքին՝ բազմոց մը, ձախին՝ ճերմակ եռոտանի հանդերձակալ՝ վրան սեւ գլխարկ մը, աչին՝ սեղանիկ մը եւ ձախին՝ առջեւը, հասարակ աթոռ մը: Նորային օգնականները այս իրերն էին, առաւել մէջը ընդմէջ լսող երաժշտութիւնն ու երգը եւ տեսնող լոյսի ու ստուերի խաղերը:

Նորա արուեստագետին պատմութիւնը ներկայացնելու ձեւն էր ու կարողութիւնը անկասկած, որ քարացուցած էր դահլիճը: Նորան էր բեմին վրայ իր համարձակ, պարզ եւ տիրապետող ներկայութեամբ:

Նորա արուեստագետին պատմութիւնը ներկայացնելու ձեւն էր ու կարողութիւնը անկասկած, որ քարացուցած էր դահլիճը: Նորան էր բեմին վրայ իր համարձակ, պարզ եւ տիրապետող ներկայութեամբ:

Նորան էր որ իր ոչ երկար կեանքին ապրումները կարողացած էր անցելու իրեն փոխանցուած եղե-

լութիւններուն, «երկրէն» եկած աւանդութիւններուն, սովորութիւններուն, օրօրներուն ու երգերուն առթած տանջող եւ ուրախ յուշերը կրցած էր համեմել զուարթախոհութեամբ եւ համադրել բացառիկ ներդաշնակութեամբ ու ստեղծել «Նորա Արմանիի հետ բազմոցին վրայ» խորագիրը կրող գողտրիկ եւ իմաստալից այս ստեղծագործութիւնը:

Եւ այս ստեղծագործութեան պատումը Նորայի արտասանական ոճին բացառիկ կարողութեամբ, մերթ բանաստեղծութեամբ, մերթ երգով, մերթ բազմոցին նստած մերթ աթոռին՝ երբեմն խօսելով հանդիսատեսին, երբեմն պարելով, հասաւ հանդիսատեսին, եւ յուզումով ու խինդով պարուրելով անոր եութիւնը, ներգրաւեց զայն իր պատումին մէջ:

Նորա արուեստագետին իրաւ տաղանդն էր որ միաձուլած էր բեմն ու դահլիճը:

Ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներով գրուած այս ներկայացումը շրջած է Լոս Անճելոս, Շիքագօ, Տիբորոյթ, Ֆիլատելֆիա, Պոստըն, Յիւթթըն, Ուաշինկթըն, Նիւ Եորք, Մոնթրէալ, Փարիզ, Մամբրօ, Զան, Իսի լէ-Մուլինօ եւ վերջապէս հասած Գահիրէ, հրաւերով ու գործակցութեամբ Գահիրէի Պետական Օփերային եւ Գահիրէի ԶԲԸՄիութեան:

Անկասկած զանազան նշանաւոր բեմադրութիւններու հեղինակ ֆրանսացի բեմադիր Ֆրանսուա Քերկուրլէքի չէ սխալած գործակցելով Նորա Արմանիի հետ ու բեմադրելով անոր գործը:

Զէին սխալած չէր զայն Գահիրէ հրաւիրողները: Սխալած էին բոլոր անոնք որոնք անտարբեր գտնուելով ներկայ չէին եղած ներկայացման:

Եւ ինչպէս ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ տիար Օննիկ Պլըքտանեան ներկայացման աւարտին ի պատիւ արուեստագիտուհիին տրուած մտերմիկ ընթրիքին ընթացքին իր շնորհակալական խօսքին մէջ նշեց, «ներկայ սերունդին պատկանող կարգ մը այլ արուեստագետներու կարգին, Նորան եւս այս ստեղծագործութեամբ իր ներդրումը կ'ընէ հայոց ցեղասպանութեան ճանաչման գործին եւ մենք ուրախ ենք որ այս ձեռնարկը զուգահիւսեցաւ Մեծ Եղեռնի 90-ամեակին»:

70-ական թուականներուն Զայ Գեղարուեստասիրաց Միութեան համեստ բեմահարթակին վրայ իր առաջին դողող քայլերը առած Նորա Էքսերճեան – Արմանիի մինչեւ այժմ տարբեր երկիրներու մէջ զանազան դերերով ունեցած ելոյթները այս սեղմ տողերուն մէջ թուել դժուար է: Սակայն, նշենք, որ Նորային կատարած դերերը շարժապատկերի, հեռատեսիլի, թատրոնի եւ ձայնասփիւռի համար, զինք արժանի դարձուցած են Զայաստանեան եւ Ամերիկեան կարգ մը մրցանակներու եւ Զայաստանի



Պետական Թատրոնի «Պատույ Անդամ»-ի կոչումին:

Այս բոլորեն ետք կը մաղթենք որ Նորան հանդես գայ ևաւ ստեղծագործական բազմաբնոյթ ասպարեզներու մէջ նուաճելով նորանոր գագաթներ:

Արաքսի Տեովլէթեան



Նորա Արմանի ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-ի Վարչութեան կարգ մը անդամներուն հետ Ձախեն տեսքը՝ Միսաք Չէչճէնեան, Օննիկ Պլըքտանեան, Զրիս Միքայէլեան, տիկին Նորա Արմանի, տեսքը՝ Պերճ Թերզեան, Կարի Զէհիայեան եւ Մարտիկ Պալաեան:

ՀԲԸՄ-Ի ԳԱՀԻՐԷԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ԱՆՂԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

Չորեքշաբթի, 13 Ապրիլ 2005, երեկոյեան ժամը 8.00-ին, մէկ ժամ յետաձգումով տեղի ունեցաւ ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղին տարեկան անդամական ընդհանուր ժողովը, ՀՍԸՄ-ՆՈՒՊԱՐ մարգարանի սրահին մէջ:

Ընդհանուր ժողովը վարեց Միութեան ատենապետը՝ տիար Օննիկ Պլըքտանեան:

Ժողովը քննարկեց օրակարգի հարցերը:

Ընթերցուեցան եւ վաւերացուեցան նախորդ տարեկան անդամական ընդհանուր ժողովի ատենագրութիւնը, 2004 տարեշրջանի բարոյական տեղեկագիրը, 31-12-2004-ի նիւթական համարատուութիւնը, հաշուեքննիչի տեղեկագիրը եւ 2005 տարեշրջանի նախահաշիւ պիւտճէն:

Գալով 2005 տարեշրջանի հաշուեքննիչի ընտրութեան եւ պատուագինի որոշումին, ներկաները Վարչութեան յանձնեցին տնօրինել լաւագոյնը:

Վարչական երեք անդամներ՝ տիար Նորայր Տեովլէթեան, տիար Հարի Չէչճէնեան եւ օրդ. Սոնա Մարգարեան վիճակաւ դադրած էին վարչութեան մաս կազմելէ:

Վարչութեան մաս կազմելու համար իրենց թեկնածութիւնը դրած էին տեսքը՝ Նորայր Տեովլէթեան, Պերճ Զէչճէնեան, Կարի Զէհիայեան եւ Կարօ Վարժապետեան:

Ընտրութեան մասնակցեցան 106 անդամներ (60 ներկայութեամբ եւ 46 լիազօրութեամբ):

Ընտրութենէն ետք Վարչութեան մաս կազմեցին տեսքը՝ Պերճ Զէչճէնեան 88 ձայն, Կարի Զէհիայեան 84 ձայն եւ Նորայր Տեովլէթեան 74 ձայն:

Չորեքշաբթի, 20 Ապրիլին գումարուեցաւ Վարչութեան նիստը, որուն ընթացքին կազմուեցաւ վարչութեան դիւանը հետեւեալ կազմով:

Պայ. Օննիկ Պլըքտանեան Ատենապետ
 Պերճ Թերզեան Փոխ Ատենապետ
 Մարտիկ Պալաեան Ատենադպիր
 Միսաք Չէչճէնեան Գանձապահ

Պայ. Զրիս Միքայէլեան Խորհրդական
 Ճորճ Սիմոնեան Խորհրդական
 Նորայր Տեովլէթեան Խորհրդական
 Կարի Զէհիայեան Խորհրդական
 Պերճ Զէչճէնեան Խորհրդական

Վարչութիւնը իրեն օժանդակ նշանակեց հետեւեալ անդամները:

Տիկիններ

Թալին Երզնկացեան
 Կարինէ Տեովլէթեան – Սիկալաս

Օր. Սոնա Մարգարեան

Պ. Օննիկ Կարիպեան

Տոքթ. Վիգէն Ճիգմեճեան

Անխափան եւ բեղուն գործունեութիւն կը մաղթենք ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի Վարչութեան եւ նշանակուած օժանդակներուն:



ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳԸՐ ԹՂԹԱԾՐԱՐ

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳԸՐ ՖՈՆՏԻ

31-12-2004

ԳՈՅՔԵՐ	Ե.Ո.	ՊԱՐՏՔԵՐ	Ե.Ո.	Ե.Ո.
ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐ (Ե իսլա.)	20 052 582.99	Սաթենիկ Չա ըր Ֆոնտի Պահեստ (1.1.04)	3 517 445.15	
ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐ (Տոլար)	75 273.83			
Ս. Չա ըր Կեդրոն (ՀԵ.)	2 966 500.00	Ելեմուտքի հաշիւէն փոխանցուած առաւելութիւն	84 926.76	
Առողջապահական ծրա ղին առ հաշիւ վճարուած 2005 Մշակութային ծրա իրներու առ հաշիւ վճարուած	1 292.50	Սաթենիկ Չա ըր Ֆոնտի Ընդհ. Պահեստ		3 602 71.91
Հայկական Միութիւններու Յատկացումներու առ հաշիւ վճարուած (Հայկական Ընթերցասրահ)	7 348.00			
Հայ Ուսուցիչներու Գնահատանքի Կենսաթոշակի առ հաշիւ վճարուած	10 000.00	Սաթենիկ Չա ըր Կեդրոնի Նորո ութեան Պահեստ (31.12.04)		2 932 349.52
Ընկերային Ապահովա ղութիւն Աւանդ ալլոց մօտ	549.00			
	8.75			
	2 720.80	Սաթենիկ Չա ըր Ֆոնտ (2/3 բաժին)		10 939 592.46
		Սաթենիկ Չա ըր Ֆոնտ (1/3 բաժին)		5 469 796.23
		Վճարելի փոխհատուցում (Հանի Կալալ)		10 000.00
		Պահանջատէրեր		
		Տուրքերու վարչութիւն (կահաւորեալ վարձք)	5 304.90	
		Տուրքերու վարչութիւն- Ջեղչուած եւ Աւելցուած տուրքեր	272.65	
		Արեւի արաբերէն յաւելուած (վճարելի)	21 416.00	
		Ջահակիր երկշաբաբաբերք (վճարելի)	600.00	27 593.55
		Հ.Բ.Ը.Մ. Գահիրէ		24 816.50
		Առողջապահական Ծրա ղին առ հաշիւ անձուած (2005)		30 000.00
		Առողջապահական Ծրա ղին օ տուողներու վճարելի 2004 տարուան համար		69 045.95
		Առողջապահական Ծրա ղին օ տուողներու ժառան որդներ (2004)		10 709.75
	23 116 275.87			23 116 275.87

ԵԼԵԽՄՈՒՏՔԻ ՀԱՇԻՒ ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳԸՐ ՖՈՆՏԻ

1 ՅՈՒՆՈՒՄԱՐԵՆ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2004

ԾԱԽՍԵՐ	Ե.Ո.	ԵԿՎՄՈՒՏՆԵՐ	Ե.Ո.
Մշակութային Ծրա ղեր	235 866.65	Դրամատոնային Աւանդներու Եկամուտ-Ատլի	672 536.20
Հայկական Միութիւններու Յատկացումներ	54 004.70	Դրամատոնային Աւանդներու Եկամուտ-Բոքսի	1 312 800.00
Երիտասարդական ործունէութիւն	105 467.08		
Պետական եւ Համա-Ե իսլտական Ծրա ղեր	50 000.00	Կահաւորեալ Վարձակալութիւն	37 290.00
Ընկերային Օժանդակութիւն (Ապրուստ եւ դարմանում)	255 461.90		
Կրթաթոշակներ	175 977.30	Առողջապահական Ծրա ղի	57 000.00
Առողջապահական Ծրա ղի Գումար	526 623.32	Նուիրատուութիւններ	488.80
	1 403 400.95	Տոլարի վրայ տուկոսի եկամուտ	51.81
Թոշակներ	89 520.00		
Կալուածատուրք	746.82		
Ընդհանուր Ծախսեր	84 217.40		
Ընկերային Ապահովա ղութիւն	10 686.00		
Դրոշմատուրք	240.00		
Տոլարի սակա ղինի Տրք.	1 123.98		
Կահաւորեալ Վարձակալութեան տուրք	5 304.90		
Գումար	1 595 240.05		
Փոխանցում Ս. Չա ըր Կեդրոնի Նորո ութեան Պահեստի հաշիւին	400 000.00		
Փոխանցում Ս. Չա ըր Ֆոնտի Ընդհանուր Պահեստին	84 926.76		
Ընդհանուր Գումար	2 080 166.81		2 080 166.81

**ԸՆԿԵՐԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ (Ապրուստ եւ դարման)**

	Ապրուստ Ե.Ո.	Դարման Ե.Ո.	Բժիշկ Ե.Ո.	Գումար Ե.Ո.
61 հովանատրեալ	151 450.00	99 211.90	4 800.00	255 461.90

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

	Աշակերտ	Գումար Ե.Ո.
Նախակրթական եւ Երկրորդական Հիմնարկներ	27	47 846.90
Բարձրա ոյն Ուսումնական Հիմնարկներ (Գահիրէ)	16	110 115.40
Բարձրա ոյն Ուսումնական Հիմնարկներ (Ադեքսանդրիա)	3	12 281.00
Այլ Ուսումնական Հիմնարկներ	1	5 500.00
Կրթաթոշակներու ծանուցում		234.00
Գումար	47	175 977.30

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

	Ե.Ո.
Արձանա լուսավորման մասնակիցներ	475 հո ի
Օ տուող մասնակիցներ	420 հո ի
Յատկացում Գումար	526 623.32

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

	Ե.Ո.
«Արեւ» թերթի արաբերէն լեզուով ամսօրեայ յատկում	56 416.00
«Տեղեկատու» Պարբերաթերթ	8 711.65
Ուսումնասիրական պարասպորտային յատկացում	24 600.00
Գերազանցութեան մրցանակներ	8 916.30
Մշակութային ձեռնարկներ	44 097.80
Հայաստան եւ Հայերը ե իպտական մամուլին մէջ Ծրա իր	26 700.00
Գիրքերու հրատարակութիւն	57 835.00
Նուէր տալու համար իրքեր	323.65
ՀԲԸՄ-ի Նորակազմ Մանուկներու Եր չախտումը	8 266.25
Գումար	235 866.65

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

	Ե.Ո.
Այծեմնիկ Տիկնանց Միութիւն	3 000.00
ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐ - Հեղիոպոլիս	47 560.40
ՀԲԸՄ - Գահիրէ	3 444.30
Գումար	54 004.70

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

	Ե.Ո.
Համալսարաններու կարօտ ուսանողներու պետական ֆոնտ	50 000.00



ԵԳԻՊՏՈՍ ՈՒ ՓԱՐԱՒՈՆՆԵՐ

«Եգիպտոս ու փարաւոններ» կարծեք իրարու հոմանիշ ըլլան ո՛չ միայն օտարներուն, այլ նաեւ եգիպտացիներուն համար: Անկարելի է մէկ բառը լսել, առանց միւսը մտաբերելու: «Եգիպտոս ու փարաւոններ» խորհրդաւոր ու դիւթիչ ազդեցութիւն ունին մաւաւանդ հնագետներու ու եգիպտաբաններու վրայ, որոնց մասնագիտական մօտեցումն ու ըմբռնումը այս հին քաղաքակրթութեան, գայն առաւել գնահատանքի ու գմայլանքի արժանի կը դարձնեն:

Սաքքարայի աստիճանաւոր բուրգը (2650 Ն. Բ.), աշխարհի կանգուն մնացած հնագոյն շինութիւնը, կառուցուած հանճարեղ ճարտարապետ Իմհոթեպի կողմէ Չօսեր (2667-2648 Ն. Բ.) փարաւոնին համար, 750 տարեկան էր արդէն, երբ Յին Կտակարանի նահապետ Աբրահամը ծնաւ:

1402 թ. Ն. Բ. Թոթմոզիս 4-րդ փարաւոնը այցելելով Կիզէ, երբ տեսաւ թէ մարդու գլուխով ու առիւծի մարմինով հռչակաւոր Սֆինքսը (2560 Ն. Բ.) քանդակուած տեղւոյն կրաքար բլուրէն, արդէն հնութիւն է եւ վերանորոգումի կը կարօտի, անմիջապէս ստանձնեց Սֆինքսի վրայ կուտակուած աւազները մաքրելու գործը:

Պատմահայր Յերոդոտոս (484-420 Ն. Բ.) Եգիպտոս այցելած է 450 թ. Ն. Բ., պտըտած է երկրին երկայնքն ի վար ու հասած մինչեւ Նուպիա:

Ան հմայուելով ամէն կողմ գտնուած տաճարներէն ու բուրգերէն, մանրամասնօրէն նկարագրած է գտնուած իր 9 հատորներէ բաղկացած «Պատմութիւն» գործին 2-րդ հատորին մէջ: Ան է, որ առաջին անգամ ըլլալով եզրակացուցած է որ բուրգերը արքայական գերեզմաններ էին:

Փարաւոններու դարերու պատմութիւնը դասաւորելն ու թուագրելը կը պարտինք Մանետո (Manetho) անուն եգիպտացի քուրմին, որ ապրած է հին Յելլոպոլսոյ Օն՝ (այժմու Մաթարիա) քաղաքին մէջ 305-285 թթ. Ն. Բ.: Այդ թուականներուն Եգիպտոսի հզօր փարաւոններու շրջանը անյայտացած էր վերջնականապէս: Երկրին տերերն էին Մեծն Աղեքսանդրի յաջորդները, Պտղոմէանները (332-30 Ն. Բ.) որոնք մեծ զարկ տուին ուսման եւ գիտութեան:

Պտղոմէոս առաջինի քաջալերութեամբ Մանետո գործի անցաւ Եգիպտոսի պատմութիւնը գիտական հիմերու վրայ դնելու, օգտուելով տաճարներուն եւ մեհեաններուն գրադարաններուն մէջ պահուած պապիրոսի (papyrus) վրայ գրուած արձանագրութիւններէն:

Ան փարաւոնական ընտանիքները խմբելով 31 հարստութիւններու, տեղադրած է գտնուած գլխաւոր 8 շրջաններու մէջ հետեւեալ ձեւով:—

Վաղ Թագաւորութիւն (3100-2686 Ն. Բ.)
Առաջին եւ 2-րդ ընտանիքներ:

Յին Թագաւորութիւն (2686-2181 Ն. Բ.)
3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ ընտանիքներ:

Առաջին Տկար Շրջան (2181-2055 Ն. Բ.)
7-րդ, 8-րդ, 9-րդ եւ 10-րդ ընտանիքներ:

Միջին Թագաւորութիւն (2055-1650 Ն. Բ.)

11-րդ, 12-րդ, 13-րդ ընտանիքներ:

Երկրորդ Տկար Շրջան (1650-1550 Ն. Բ.)
14-րդ, 15-րդ, 16-րդ եւ 17-րդ ընտանիքներ:

Նոր Թագաւորութիւն (1550-1069 Ն. Բ.)
18-րդ, 19-րդ, 20-րդ եւ 21-րդ ընտանիքներ:

Երրորդ Տկար Շրջան (1069-747 Ն. Բ.)
22-րդ, 23-րդ, 24-րդ եւ 25-րդ ընտանիքներ:

Ուշ Շրջան (747-332 Ն. Բ.)

Ասորեստանի եւ Պարսից լուծին տակ,
26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ եւ 31-րդ ընտանիքներ:

Մանետոյի այս կոթողային աշխատանքը նուիրուած Պտղոմէոս II-ի, գետեղուեցաւ Աղեքսանդրիոյ հռչակաւոր գրադարանին մէջ: Դժբախտաբար, այս աշխատանքը, գրադարանին մնացեալ ձեռագիր մատենաներուն նման հրդեհի զոհ գնաց Ն. Բ. 48-ին:

Փարաւոնեան հարստութեան մասին Մանետոյի ուսումնասիրութենէն մասեր պահուած են ժամանակակից օտար պատմաբաններու ընդօրինակութիւններուն եւ թարգմանութիւններուն շնորհիւ:

Շատ յաճախ կը լսենք կամ կը կարդանք որոշ փարաւոններու մասին, օրինակի համար Ռամսէս, Յաճեպտոս, Թութ - Անխ - Ամուն, Զեոփս, Ախնաթոն, Չօսեր եւայլն ...: Բոլորն ալ ծանօթ անուններ են, սակայն մեզմէ շատեր կ'անգիտանան, թէ ո՞վ որմէ աւելի հին է, ո՞ր հարստութեան կը պատկանի, ի՞նչ յուշարձաններ ձգած է, ո՞ր քաղաքներուն մէջ ապրած է եւայլն: Այս բոլորին մասին դժուար է գիտնալ, իսկ աւելի դժուար՝ մտապահելն ու պետք եղած ժամանակ յիշելը:

Ուրեմն այս գրութեանս մէջ պիտի աշխատիմ համառօտ տեղեկութիւններ տալ մի քանի շատ հռչակաւոր անձնաւորութիւններու մասին:

Սկսելով ամենահին ժամանակաշրջանէն, յիշենք թէ 3100 թուականին Մինա (Մենես) կամ Նարմըր միացնելով երկրին իշխանութիւնները ինքզինք թագաւոր հռչակեց ու հիմնեց Մեմփիս քաղաքը (արդի Միդ Բահիլա գիւղը, Քահիրէն 24 ըմ. հարաւ): Մենեսով կը սկսի փարաւոնեան առաջին ընտանիքը:

Յին թագաւորութեան 4-րդ ընտանիքին կը պատկանին Զեոփս (2589-2566 Ն. Բ.), Զեփրեն (2588-2532 Ն. Բ.) եւ Միկերին (2532-2503 Ն. Բ.), որոնց կառուցել տուած 3 բուրգերը Կիզէի բարձրաւանդակին վրայ կը նկատուին հին աշխարհի եօթը հրաշալիքներէն գլխաւորը եւ միակ կանգունը:

Մեղուհողեպ II (2055-2004 Ն. Բ.) հիմնադիրն է Միջին Թագաւորութեան եւ կը պատկանի 11-րդ ընտանիքին: 2181-2055 Ն. Բ. Եգիպտոս կառավարուած էր տկար փարաւոններու կողմէ եւ յաճախ ենթարկուած արեւմուտքէն Լիպիացիներու, արեւելքէն Սինայի պետութիւններու եւ հարաւէն Նուպիացիներու յարձակումներուն եւ գրաւումներուն: Մեղուհողեպ II Վերին Եգիպտոսի իշխաններէն էր, ուստի երկրին մայրաքաղաք հռչակեց Թեբէն (այժմ Լուքսոր):

1650-1550 Ն. Բ., 100 տարի, Եգիպտոս անկումի շրջան ապրած է: Իրերայաջորդ տկար փարաւոններու անկարողութիւնէն օգտուելով, հիւսիս արեւելքէն վաչ-



կատուն հովի ցեղախումբեր (հիւքսոսներ), յարձակած ու գրաւած են Տելթան եւ հասած մինչեւ Միջին Եգիպտոս:

Ահմոս I (1550–1525 Ն. Ք.) Թեբէի իշխաններէն մէկը, կարողացաւ միացնել Վերին Եգիպտոսի իշխանները, յարձակեցաւ Հիւքսոսներուն վրայ, վտարեց զանոնք երկրէն ու հաստատեց Նոր Թագաւորութեան շրջանը որ կը սկսի 18–րդ փառաւոր ընտանիքով:

Հաճեպսուտ (1473–1458 Ն. Ք.) առաջին կինն է որ կառավարած է Եգիպտոսը որպէս լիազօր փարաւոն: Ան կը պատկանի 18–րդ ընտանիքին: Անոր շրջանին երկիրը վայելած է խաղաղութիւն ու բարգաւաճութիւն: Ան հռչակաւոր է Լուքսորի արեւմտեան ափին իր կառուցած Տեր Էլ Պահարի տաճարով, որ կը նկատուի ճարտարապետութեան գլուխ գործոց մը: Իր ժամանակ եգիպտական նաւատորմի Վարմիր Ծովն ի վար ուղղուելով անցած է Պապ Էլ Մանտապ նեղուցէն եւ առեւտրական կապեր հաստատած Բոնոյի (այժմ Սոմալ) հետ:

Ախնաթոն (1352–1336 Ն. Ք.) որդին է հզօր փարաւոն Ամոնհոթէպ III–ի: Ան իր թագաւորութիւնը սկսաւ որպէս Ամոնհոթէպ IV–րդ սակայն տարի մը ետք Եգիպտոսի գլխաւոր չաստուած «Ամոն» անունը փոխարինեց «Աթոն»-ով եւ հետեւաբար իր անունը եղաւ Ախնաթոն (փառք արեւի սկաւառակին) փոխան Ամոնհոթէպի (Ամոնը գոհ է): Ան իր կողքին ունենալով իր գեղեցիկ կիներ Նեֆթիթիթին, ինքզինք նուիրեց մէկ աստուած՝ (արեւը) պաշտելու գաղափարը տարածելու երկրին մէջ:

Ան սաստիկ բախումներ ունեցաւ եգիպտական բազմաթիւ չաստուածներու նուիրուած տաճարներու քուրմերուն հետ: Միաստուածութեան գաղափարը խորթ ու անընդունելի էր թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ ալ քուրմերուն համար: Ուստի Ախնաթոն հեռանալով Թեբէնէ, Ամարնայի մօտ Ախեթաթոն անունով նոր քաղաք մը հիմնեց, ուր ապրեցաւ իր ընտանիքին հետ անտեսելով իր արքայական պարտականութիւնները:

Ախնաթոն երբ 18 տարի ետք կը մահանայ, գահ կը բարձրանայ մանուկ Թութ–Ախխ–Ամոնը, որ ոմանց կարծիքով Ամոնհոթէպ III–ի որդին է, այսինքն Ախնաթոնի եղբայրը, իսկ ըստ ուրիշներու՝ Ախնաթոնի որդին:

Թութ–Ախխ–Ամոն (1336–1327 Ն. Ք.) գահ բարձրացած է 9 տարեկան հասակին եւ իշխած է հազիւ 10 տարի: Ան անծանօթ փարաւոն մըն էր մինչեւ այն ժամանակ երբ Howard Carter 1922–ին իր դամբարանը յայտնաբերեց Լուքսորի թագաւորներու հովիտին մէջ: Նախքան թագաւոր ըլլալը ան կը կոչուէր Թութանխաթոն (աթոնի կենդանի երեւոյթը): Սակայն շուտով կը ձերբազատուի «աթոն» մակդիրէն եւ բոլորին հաճելի ըլլալու համար ինքզինք կը կոչէ Թութ–Ախխ–Ամոն:

Ռամսէս անունը կրած են 11 թագաւորներ, 19–րդ եւ 20–րդ ընտանիքներէն: Սակայն անոնց մէջ ամենահռչակաւորը եղած է Ռամսէս II–ը (1279–1213 Ն. Ք.):

Անոր շինել տուած կամ իւրացուցած տաճարներն ու հսկայական արձանները սփռուած են Մանֆէն մինչեւ Նուպիա: Ան իր 66 տարի երկարող թագաւորութեան ընթացքին եղած է դիւանագետ, ռազմագետ ու շինարար թագաւոր մը, ու իր բոլոր յաղթանակները քանդակել տուած է տաճարներուն պատերուն վրայ:

Ապու Սիմպլի (Ասուանէն 250 քմ. հարաւ) տաճարը իր ճակտին բազմած Ռամսէս II–ի չորս հսկայ արձաններով պատկառազօր է տակաւին: Վիմափոր մեծ տաճարը իր իւրայատուկ ճարտարապետութեամբ զարմանք կը պատճառէ աստղագետներուն: Դարերէ ի վեր, ամէն տարի, 22 Փետրուարին եւ 22 Հոկտեմբերին (Ռամսէսի ծնած ու գահ բարձրացած թուականներուն) արեւի ճառագայթ մը ներս կը մտնէ տաճարին խորունկ միջանցքէն եւ կը լուսաւորէ հոն զետեղուած Ռամսէսի արձանին դէմքը:

Ռամսէս II կը նկատուի փարաւոնական շրջանի վերջին հզօր թագաւորը: Երբ 1069–ին Ռամսէսներու շառաւիղը կը վերջանայ, Եգիպտոս կը կորսնցնէ իր վաղեմի փառքը ու կը կառավարուի տկար իշխաններու կամ քուրմերու կողմէ:

670 Ն. Ք. Եգիպտոս կ'իյնայ Ասորեստանի թագաւոր Աշուրբանիպալի լուծին տակ:

525–522 Ն. Ք. Պարսից Կամբիզ արքան կը յարձակի ու կը գրաւէ Եգիպտոսը, մինչեւ որ 332 Ն. Ք.–ին Մեծ Աղեքսանդր Մակեդոնացին պարտութեան մատնելով Պարսից Տարիոս III արքան, տեր կը դառնայ Եգիպտոսի:

Փարաւոնները դարերու ընթացքին միշտ մարմաջ մը ունեցած են արձանագրելու գիրով կամ պատկերներով իրենց առօրեայ կեանքը, յաղթանակները, օրէնքները եւ այլն ...: Հիրոկլիֆը (սուրբ արձանագրութիւն) գործածուիլ սկսած է 3200 Ն. Ք.–ին: 394 Ք. Ե. հիրոկլիֆը վերջին անգամ գործածուած է Ֆիլէյի տաճարին մէջ, որմէ ետք անյայտ պատճառներով դադրած է ըլլալ երկրին պաշտօնական արձանագրութիւններու միջոցը ու շուտով մոռացութեան մատնուած:

1825–ին Ֆրանսացի լեզուագետ ու եգիպտաբան Jean–Francis Champollion (1790–1832) կարողացաւ վերծանել հիրոկլիֆին առեղծուածը եւ տաճարներու ու պապիրոսներու վրայի արձանագրութիւնները ընթեռնելի դարձան: Այս նուաճումը նոր դռներ բացաւ հնագետներուն եւ եգիպտաբաններուն առջեւ: Սակայն ամէն օր պեղուած ու երեւան հանուած գմբուսած մարմինները, արձանները, տաճարներն ու դամբարանները փոխանակ լուսաբանելու՝ աւելի կը շփոթեցնեն ու ափ ի բերան կը ձգեն զանոնք:

Եգիպտոսի տարբեր շրջաններուն մէջ կանգուն մնացած փարաւոնական արձանները կարծեք ներդաւիտ ժպիտով կը դիտեն արդի մարդուն փարաւոնեան առեղծուածը լուծելու անկարողութիւնը ու կը գթան անոր վրայ:

Սօսի Յակոբեան

Աղբիւրներ՝
 British Museum Dictionary of Ancient Egypt
 Ian Shaw and Paul Nicholson
 The American University in Cairo Press.
 Ancient Times
 A History of the Early World
 James Henry Breasted
 Ginn and Company.

EGYPT to the End of the Old Kingdom
 Cyril Aldred
 Thames and Hudson.

From Eden to Exile
 David Rohl
 Arrow Books.

The Rediscovery of Ancient Egypt
 Peter A. Clayton
 Thames and Hudson.



ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Աղա Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեաններու հայրը Յարութիւն Մելգոնեան ամուսնացած է եւ ունեցած՝ հինգ զաւակներ. Գայիանէ, Սրբուհի, Յակոբ, Գրիգոր եւ Կարապետ:

Գայիանէ ծնած է 1837-ին Կեսարիա, ամուսնացած է Յակոբ Չայլաքեանի հետ եւ ունեցած են չորս զաւակներ՝ Յարութիւն, Ճիվան, Սահակ եւ (օրդ.) Խոմէ:

Գայիանէ մեռած է 26 Յոկտ. 1901-ին՝ Աղեքսանդրիա:

Իր որդին Յարութիւնը ծնած է 1865-ին Կեսարիա, 1882-ին հաստատուած է Աղեքսանդրիա եւ աշխատած է մօրեղբայրներուն՝ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեաններու ծխախոտի առեւտրական տան մէջ: Շրջան մը աշխատելէ ետք, կը հիմնէ իր անձնական ծխախոտի վաճառատունը, ծախելով փոքրաքանակ եւ մեծաքանակ: Մօրեղբայրներուն խնդրանքով կը նշանակուի Մելգոնեան ծխախոտի վաճառատան վարիչ-տնօրէն:

Յարութիւն ամուսնացած է օրդ. Եղեսիա Խորասանճեանի հետ եւ ունեցած են եօթը զաւակներ. Մարի, Յակոբ, Արաքսի, Գայիանէ, Ալիս, Անահիտ եւ Տիգրան:

1882-ին, Եգիպտոսի մէջ Ահմետ Օրապի Փաշայի ապստամբութեան ատեն, Մելգոնեաններու վաճառատունը կողոպտուած է: Յետոյ խաղաղութիւնը հաստատուելէ ետք, վնասուց հատուցման յանձնախումբին նախագահ Թագուր Պէյ Յակոբեանի բարեխօսութեամբ, անոնք ստացած են 4000 եգիպտական ոսկի:

1887-ին Աղա Գրիգոր Մելգոնեան 50 ֆրանք կը նուիրէ Աղեքսանդրիոյ մէջ, նոր գերեզմանատան շրջապատի շինութեան հանգանակութեան առթիւ: 1892-1900 Աղա Գրիգոր Մելգոնեան կ'անդամակցի Աղեքսանդրիոյ Աղքատախնամ Ընկերութեան: 1900-1902 թուականներուն կը վարէ անոր Փոխ-Ատենապետի պաշտօնը:

Աղա Գրիգոր Մելգոնեան կը մեռնի 3 Յունիս 1920-ին եւ մարմինը առժամեայ կը թաղուի

Աղեքսանդրիոյ Յայոց Պողոս-Պետրոս եկեղեցին շրջափակին մէջ: 1935 Յունուար 13-ին աճիւնները կը փոխադրուին Կիպրոս եւ կ'ամփոփուին Մելգոնեան Կրթական հաստատութեան շրջափակի պարտէզին մէջ: Յետագային կառուցուած է յուշարձան-դամբարանը՝ 15 Յունուար 1956-ին:

Արդարեւ, 15 Յունուար 1956-ին, Ս. Յովհաննու Կարապետի Կիրակին յիշատակելի օր մը կ'ըլլայ ՅԲԸ-Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան կեանքին մէջ: Կիպրոսի Թեմի առաջնորդ Գերայ. Տ. Ղեւոնդ Եպս. -ի նախագահութեամբ յաջորդաբար

կը կատարուին եռեակ հանդիսութիւններ, անմահ բարերարներու յուշարձանի բացման օրը: Այդ օրը իրենց անունը յաւերժացնող Մելգոնեան Կրթ. Հաստատութեան հիմնադրութեան երեսունամեակն էր:

Աղա Գրիգոր Մելգոնեան եղած է մեծ հայրենասէր. ապացոյց - ան իր ամբողջ հարստութիւնը նուիրեց հայ Ազգին: «Արեւ» 6-րդ տարի, թիւ 114 Յունիս 1920»:

Կարապետ Մելգոնեան ծնած է 1849-ին Կեսարիա: Նախնական ուսումը ստացած է ծննդավայրի Ազգային Վարժարանը: 1873-ին, իր եղբոր՝ Գրիգորի հետ գացած է Ֆոքշան (Ռումանիա), ապա 1875-ին՝ անոնք հաստատուած են Աղեքսանդրիա եւ զբաղած են ծխախոտի վաճառականութեամբ, մասնաճիւղեր հաստատելով Չակագիկ, Ֆէյում եւ 1888-ին՝ Ասուան քաղաքներուն մէջ:

1900-ին, Աղա Կարապետ եւ Աղա Գրիգոր Մելգոնեան եղբայրները կը հիմնեն Մելգոնեան ծխախոտի եւ սիկարէթի արդիական սարքաւորումներով գործարանը:

1904, Ղեկտեմբերին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ի նպաստ կատարուած հանգանակութեան՝ անոնք կը նուիրեն 500 ֆրանք: (տես «Ազատ Բեմ» լրագիր, 1904 Յունիս):

1920-ին, Մելգոնեան եղբայրները 500 ոսկի



Գրիգոր Մելգոնեան



Կարապետ Մելգոնեան



կը նուիրեն Գահիրէի «Ազհար» իսլամական համալսարանի կեդրոնին:

1921 Յոկտ. 13-ին, Կարապետ Մելգոնեան կը նուիրէ 300 ոսկի «Յայաստանի Սովետոց Եղբայրական ֆոնտ»ին:

1920-ին Մելգոնեան հաստատութիւնը 2000 ոսկի կու տայ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան գործին: Իսկ Յայրենիքի վերաշինութեան հանգանակութեան՝ 1926 Յոկտ. 23-ին կը մասնակցի 1450 ոսկիով:

Յակոբ Մելգոնեանի զաւակը Արթաքի Մելգոնեան, իր հորեղբոր Կարապետի դէմ դատ կը բանար 26 Յուլիս 1921-ին, պահանջելով իր հանգուցեալ հորեղբոր Գրիգորի թողած հարստութեան իր բաժինը: Արթաքի Մելգոնեան կը ստանար որպէս ժառանգ կոկիկ գումար մը: (Աշէնք որ յիշեալ անձնաւորութիւնը մեծ հայրն է այժմու ժագ Մելգոնեանի):

1924 Սեպտեմբեր 15-ին, Կարապետ Մելգոնեան կը պատուուի Ս. Փրկչի շքանշանով ի գնահատութիւն իր մարդասիրական եւ բարեսիրական գործերուն: (տես «Արեւ», 30 Սեպտ. 1924: «Յուսաբեր», 15 Փետր. 1927, թիւ 269):

Ազա Կարապետ Մելգոնեան իր հանգուցեալ Գրիգոր եղբոր թողած ժառանգութիւնը, ինչպէս նաեւ իր անձնական հարստութիւնը, երկուքին բաժինները միասին 700.000 ոսկի արժող, գործատունն ու կալուածները կը կտակէր նախ Յայաստանի Յանրապետութեան 1920-ին, Աղեքսանդր Խատիսեանի Եգիպտոս այցելութեան առթիւ, ապա՝ Յայաստանի Խորհրդայնացումէն յետոյ, Բարերարը իր կտակը կը փոխանցէր Պոլսոյ Պատրքիարքութեան: Սակայն անոր ալ քայքայումէն յետոյ (Զեմալականներու գրաւումէն յետոյ 1922-ին), օրինական գործողութիւններով իր հարստութիւնը կը նուիրէր Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որ կազմած էր ինամակալութիւն մը, նախագահութեամբ Պատրիարք Տ. Չաւէն Արք. Տէր Եղիայեանի, վարելու համար գործատան ճակատագիրը, Կիպրոսի Մելգոնեան երկսեռ որբանոցները (որբանոց – կրթարան) եւ կատարելու համար կտակին յարակից քանի մը տրամադրութիւնները:

Ազա Կարապետ Մելգոնեան Կիպրոսի Յայոց Ս. Մակար վանքը տանող ճամբու շինութեան համար ալ կը նուիրէր 1000 անգլիական ոսկի: (Տես «Արեւ» 1932, թիւ 3993 եւ 2 Փետրուար 1955):

Եգիպտահայ ազգային բարերար Ազա Կարապետ Մելգոնեան կը մահանար 23 Յուլիս 1934-ին, Աղեքսանդրիոյ իր բնակարանին մէջ:

«Երկուշաբթի, 23 Յուլիս 1934, կեսօրուան ժամը 11-ին, Ազգային Բարերարը հոգին աւան-

դեց Ռամլէի իր սեփական վիլլային մէջ: Յայկական Բարեգործական Ընդհ. Միութեան եւ Աղեքսանդրիոյ Ազգային Քաղաքական Ժողովի անդամները նիստ գումարելով՝ Ազգային Բարերարին մահը տեղեկացուցին հեռագրով, ձայնասփիւռով եւ հեռաձայնով՝ Ամերիկա, Ժնեւ, Պոլիս, Էջմիածին, Յունաստան, Անթիլիաս եւ այլուր: (տես «Արեւ», 1934 թիւ 4724):

Բարերար Կարապետ Մելգոնեանի աճիւնները 14 Օգոստոս 1934-ին Աղեքսանդրիայէն Կիպրոս կը փոխադրուին Յայկական Բարեգործական Ընդհ. Միութեան Եգիպտոսի Շրջանային Վարչութեան արտօնութեամբ, ընկերակցութեամբ Տիգրան Յաճընլեանի եւ մարմինը կ'ամփոփուի Մելգոնեան Կրթ. Յաստատութեան շրջափակին մէջ: 1954-ին Բարերարներու համար կառուցուած է մարմարակերտ նոր դամբարան մը եւ հոն ամփոփուած են բարերարներ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեաններու աճիւնները մասնաւոր արարողութեամբ, նախագահութեամբ Կիպրոսի Թեմի Առաջնորդ Ղեւոնդ Եպիսկոպոս Չեպէեանի: Դամբարանի Յուշարձանին բացումը տեղի ունեցած է 15 Յունուար 1956-ին: (տես «Արեւ» օրաթերթ, 30 Յունուար 1956):


Կարապետ Մելգոնեան 17 Դեկտ. 1925 թուակիր նամակով իր նուիրատուութիւնը Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն վերջնականապէս կը փոխանցէր Յայկական Բարեգործական Ընդհ. Միութեան, երկար բանակցութիւններէ յետոյ որ տեղի ունեցած էր Միութեան հիմնադիր Պօղոս Նուպար Փաշայի հետ, Մելգոնեանի լիազօր ներկայացուցիչ Տիգրան Յաճընլեանի ազգասիրական աշխատանքներուն շնորհիւ:

28 Դեկտ. 1925-ին, Աղեքսանդրիոյ միջազգային խառն դատարանին մէջ, Կարապետ Մելգոնեան իր նուիրատուութեան փոխանցումը կը կատարէ Յայկական Բարեգործական Ընդհ. Միութեան, Գահիրէի Գործադիր Ժողովին:

Ամենայն Յայոց Յայրապետը 15 Մայիս 1926 թուակիր կոնդակով մը պատուած է մեծ բարերար Ազա Կարապետ Մելգոնեանը Ս. Գրիգոր Լուսաւորիչի ոսկեայ ադամանդակուռ շքանշանով:

(տեսնել «Եգիպտահայ տարեցոյցը» 1925, Ա. տարի):

«Ազատ Ձայն»
Յաւաքեց՝
Գեորգ Գազանճեան
Դեկտ. 2004 Կիպրոս



ՄԱՐ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ ՈՂԲԱՑԵԱԼ ՅԱՐՈՒԹԻՒՆ (ԱՐԹՕ) ՎԱՇԷ ԱՐԹԻՆԵԱՆԻ

Աղեքսանդրիահայ գաղութի տերեւաթափը կը շարունակուի: Այս անգամ մահուան մանգաղը եկաւ եւ հնձեց գաղութի սիրուած եւ յարգուած անդամներէն, Աղեքսանդրիոյ Զաղաքական Ժողովի նախկին ատենապետ եւ ԶԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ փոխ-ատենապետ տղքթ. Յարութիւն (Արթօ) Վահէ Արթինեանը: Անժամանակ մահը տեղի ունեցաւ Չորեքշաբթի 2 Մարտ 2005-ի առաւօտեան ժամը 10-ին Alexandria Medical Centre հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Ողբացեալը ծնած էր Աղեքսանդրիա 18 Դեկտեմբեր 1947-ին, հայրենասեր ծնողներ Վահէ եւ Սիրվարդ Արթինեաններու յարկին տակ, յաճախած էր Աղեքսանդրիոյ Մխիթարեան Զայրերու վարժարանը ուր եւ ստացած էր հայեցի, կրօնաբարոյական կրթութիւն մը:

1969 թուականին ողբացեալը կ'աւարտէ տեղուոյ British Boys School, որուն ուսումնական շրջանը գերազանց արդիւնքով աւարտելէ ետք, 1974-ին կ'աւարտէ Աղեքսանդրիոյ համալսարանի ատամնաբուժական բաժինը:

Ողբացեալ Վահէն աւարտելով համալսարանական ուսումը յաջորդաբար գերազանց գնահատականով կ'արժանանայ մագիստրոսի եւ տղքթորայի աստիճաններուն:

1974-էն սկսեալ 6 տարի տեւողութեամբ որպէս դասախօս կը պաշտօնավարէ Թանթայի համալսարանին մէջ:

Հանգուցեալին ծնողքը հաւատացած ըլլալով ԶԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ ազգային առաքելութեան, 6 տարեկանին զայն արձանագրած էր ԶԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ Սկսուտական Շարժումին անդամ, ուր տարիներու ընթացքին ան հասած էր մինչեւ փոխ-խմբապետի պաշտօնին: Ան եղած էր նաեւ ԶԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ փայլուն մարզիկներէն մէկը եւ իր մասնակցութիւնը բերած համահայկական մարզական խաղերուն եւ փայլուն արդիւնքներ արձանագրած:

Ողբացեալ Արթօն փոքր տարիքէն մաս կազմելով ԶԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթ պոլի կրտսերներու խումբին, աստիճանաբար դարձած էր Միութեան պասքէթ պոլի Ա. խումբին լաւագոյն մարզիկներէն մէկը:

1976-ին, ԶԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարիչները նկատելով իր մէջ սերը հանդէպ Միութեան, կը հրաւիրեն զայն մաս կազմելու Վարչութեան, որպէս խորհրդական: 1982-ին ան կը նշանակուի Միութեան պասքէթ պոլի խումբին վարչական պատասխանատու, իսկ 1989-ին կը ստանձնէ Միութեան փոխ-ատենապետի պաշտօնը:

Այս երկու պատասխանատու պաշտօնները կը վարէ մինչեւ իր մահը:

1986-ին ողբացեալը կ'անդամակցէր ԲԸԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղին:

Ողբ. Արթօ Արթինեան ազգային կեանքէն ներս եւս իր լուսման կը ներդրէր, 1989-1991-ին մաս կազմելով Աղեքսանդրիոյ Թեմական Ժողովին, եւ վարելով Զաղաքական Ժողովի ատենապետի պաշտօնը:

12 Դեկտեմբեր 1982-ին ան կ'ամուսնանար օր. Անի Տիչէքեանեանի հետ, որ միշտ քաջալեր եւ նեցուկ կը հանդիսանար ողբացեալին ազգային գործունեութեան:

Ողբացեալին Ազգային յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը կատարուեցաւ Զինգաբթի 3 Մարտ 2005-ի յետ միջօրէի ժամը 3-ին, Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ մէջ: Յուղարկաւորութեան արարողութեան կարգը կատարեց Աղեքսանդրիոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Գրիգոր քնյ. Մուրատեան, հանդիսապետութեամբ եգիպտահայոց թեմի Առաջնորդական Տեղապահ Զոգշ. Զայր Աշոտ վրդ. Մնացականեանի: Բացի ողբացեալին սգակիր հարազատներէն, զայն յուղարկաւորելու եկած էին Աղեքսանդրիոյ կառավարիչ Ն. Գ. Չօրավար Մոհամետ Ապտ-Էլ Սալամ Էլ Մահկուպ, Աղեքսանդրիոյ Բժշկական Զամալսարանի ուսուցչապետ տղքթ. Ապտել Ազիզ Պիլալ, Աղեքսանդրիոյ Գրադարանի տնօրէն Իսմայիլ Սարակ Էլ Տին, Աղեքսանդրիոյ Ատամնաբուժական Զամալսարանի տնօրէն Ահմետ Ապտ Ալլա, Լիբանանի եւ Չեխիոյ դեսպանները, Աղեքս. Թեմական Ժողովի ատենապետ տիար Լեւոն Գաղթաբեան, Զաղաքական Ժողովի ատենապետ տիար Վահէ Պէնտիանեան, մշակութային, մարզական, բարեսիրական միութիւններու վարչականներ ու անդամներ, բարեկամներ եւ ծանօթներ:

Յուղարկաւորութեան կարգի աւարտին խօսք առին եգիպտոսի Թեմի Առաջնորդական Տեղապահ Զոգշ. Զայր Աշոտ վրդ. Մնացականեան, յանուն Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան՝ Զաղաքական Ժողովի ատենադպիր տղքթ. Արմեն Գավուբճեան, Գահիրէի ԶԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ կողմէ տիար Ժիրայր Տեփոյեան եւ Աղեքսանդրիոյ ԶԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ կողմէ տղքթ. Կարպիս Թօսունեան: Բոլոր խօսողները դրուատեցին հանգուցեալին կեանքի գործունեութեան բազմաթիւ երեսները եւ անոր բոլորանուէր ծառայութիւնները:

Այս ցաւալի կորուստին առթիւ եգիպտոսի ԲԸԸՄ-ի շրջանակը կը ցաւակցի իր վշտահար տիկնոջ՝ Անի Արթինեանին, գաւակներուն՝ Դանիաի եւ Վահէի, մօր՝ տիկին Սիրվարդի, քրոջ՝ Նայիրիի եւ բոլոր սգակիր հարազատներուն:

Հանգուցեալին յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր սիրտերուն եւ միտքերուն մէջ: Տէրը թող լուսաւորէ հանգուցեալին հոգին եւ երկնային անթառամ պսակներու արժանացնէ զայն:

Նազարէթ Գարթալեան



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՇՐ ԴԵՍՊԱՆՈՒԹԵՆԵՆ ՆԵՐՍ

Եգիպտոսի մէջ ԶՅ Դեսպանութեան հրաւերով, Մարտ 3-ին դեսպանատան գլխաւոր դահլիճին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը, որուն հրաւիրուած էին Հայաստանի մէջ թեկնածուական թեզ պաշտպանած եւ գիտական վերապատրաստման հետեւած եգիպտացի շրջանաւարտներ, Եգիպտոսի ուսումնական բարձրագոյն հաստատութիւններուն եւ կրթական ոլորտին մէջ աշխատող եգիպտահայ դասախօսներ եւ գիտնականներ:

Ընդունելութեան հրաւիրուած էին նաեւ Եգիպտոսի Բաճրագոյն Կրթութեան եւ Գիտական Հետազօտութիւններու նախարար Ամր Սալաման, Գահիրէի, Մենուֆիայի եւ Միսիայի համալսարաններու նախագահներուն տեղակալները, բարձրաստիճան պաշտօնեաներ Մանսուրայի եւ Աղեքսանդրիոյ համալսարաններէն, եգիպտացի դիւանագետներ, Եգիպտոսի ԶԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Պերճ Թերզեան, եգիպտական համալսարաններու մէջ գործող հայ դասախօսներ, Գահիրէի հայկական վարժարաններու տնօրէններ եւ զանգուածային լրատուական ներկայացուցիչներ:

Բարի գալուստի խօսքով ելոյթ ունեցաւ ԶՅ Դեսպան Ռուբէն Կարապետեան, ապա պա-

տասխան խօսքով հանդես եկաւ նախարար Ամր Սալաման:

Իրենց ելոյթին մէջ անոնք կարեւորեցին նման միջոցառումներու կազմակերպութիւնը, Հայաստանի եւ Եգիպտոսի կրթական եւ գիտական երկկողմանի յարաբերութիւններու զարգացման համար, յոյս յայտնելով որ մասնակիցները իրենց աջակցութիւնը պիտի բերեն այս բազմաբնոյթ համագործակցութեան խորացման:

Տիար Նախարարը յայտարարեց թէ իր հայ գործընկերոջ, նախարար Սերգօ Երիցեանի հրաւերով կը նախատեսէ այցելել Հայաստան, որուն ընթացքին պիտի ստորագրուի երկու նախարարութիւններուն միջեւ համագործակցութեան գործնական ծրագիր մը:

Եգիպտացի շրջանաւարտներուն անունով շնորհակալական խօսքով ելոյթ ունեցաւ Մանսուրայի Համալսարանի դասախօս տոքթ. Մուսթաֆա Սալէի: Ան իր խօսքին մէջ հաւաստիացուց, որ իրենք ջանք պիտի չխնայեն դեսպանութեան նախաձեռնած միջոցառումներուն աջակցելու համար:





«ՍԱԹԵՆԻԿ Ը. ՉԱԳՐ ԴԻՄՆԱԴՐԱՄ» ԵՐԱԺՅՏԱԿԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընթացիկ այս տարուան Փետրուար-Մարտ ամիսներուն, Գահիրէի Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան «Սաթենիկ Ը. Չագր Դիմնադրամ»-ին հովանաւորութեամբ լոյս տեսան հետեւեալ երաժշտական հաստիւղները, խմբագրութեամբ երաժշտագետ Զայկ Աւագեալի:

ՏԻԳՐԱՆ ՉՈՒՅԱԾԵԱՆ*

1. «Ստեղծագործութիւններ դաշնակի համար», 246 էջ:
2. «Մեներգներ եւ խմբերգներ դաշնակի նուագակցութեամբ», 94 էջ:
3. «Ստեղծագործութիւններ նուագախումբի համար», 574 էջ:
4. «Ստեղծագործութիւններ փողային նուագախումբի համար», 132 էջ:
5. «Յաւերժ շարժում», դաշնակի եւ նուագախումբի համար, 66 էջ:

ԳՈՐԱՐԻԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ**

1. «Ստեղծագործութիւններ դաշնակի համար», 270 էջ:
2. «Ստեղծագործութիւններ ջութակի եւ դաշնակի համար», 94 էջ:
3. «Ստեղծագործութիւններ թաւջութակի եւ դաշնակի համար», 54 էջ:
4. «Ստեղծագործութիւններ սրինգի եւ դաշնակի համար», 34 էջ:
5. «Ստեղծագործութիւններ երգեհոնի համար», 38 էջ:
6. «Ստեղծագործութիւններ լարային քառանուագի համար», 36 էջ:
7. «Զայկական ծիսերգութիւն», դաշնակի, ջութակի եւ թաւջութակի համար, 20 էջ:
8. «Ռոմանս. Կարօտի երգ», դաշնակի, սրինգի եւ ջութակի համար, 16 էջ:

9. «Ութ փոփոխակ Կոմիտաս Վարդապետի ժողովրդական եղանակի վրայ», սրինգի, 2 ջութակի, ջութակի եւ թաւջութակի համար, 28 էջ:

10. «Պատարագ. Նախաբան», օպուայի, 2 ջութակի, ջութակի եւ թաւջութակի համար, 16 էջ:

Խմբագրութիւններուն մեծամասնութիւնը հիմնուած է անտիպ նիւթերու՝ փոքր մաս մըն ալ 19-րդ դարուն տպագրուած եւ այսօր արխիւային նիւթեր դարձած հազուագիւտ հրատարակութիւններու վրայ: Իւրաքանչիւր հատորի սկիզբը կը գտնուի «Ներածութիւն» մը՝ ուր խմբագիրը կ'անդրադառնայ ձեռագիրներուն եւ տպագրուած գործերուն:

Չուհաճեալի աղբիւրներուն մեծամասնութիւնը առնուած է Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի դիւաններէն, իսկ Ղազարոսեանին աղբիւրները կը պահուին իր եղբօր դատեր՝ տիկին Սոնա Պետրոսեանի մօտ (Փարիզ):

Այստեղ աւելորդ չէ յիշեցնել՝ որ միջեւ այս հատորներուն հրատարակումը, 1999-էն սկսեալ Գահիրէի ԶԲ-ԸՄ-Աւագեան համագործակցութեամբ լոյս տեսած են Չուհաճեանի, Զրիստափոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմալեանի, Ալեքսանդր Սպենդիարեանի, Արքատի Զուկեի անտիպ գործերու ժողովածոներ (ընդամենը՝ 33 հատոր), ինչպէս նաեւ Արամ Խաչատուրեանի ձայնագրութիւններուն նուիրուած գունաւոր ալպոմ մը, որով երաժշտական հրատարակութիւններուն ընդհանուր քանակը կ'ըլլայ 49 հատոր:

Այսպիսով, երաժշտական հրատարակութիւնները կը խլեն Գահիրէի Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հրատարակչական գործունեութեան առիծի բաժինը:

«Տ.»

* Տի րան Չուհաճեան ծնած է 1837-ին Կ. Պոլիս եւ մահացած 1898-ին Չմիւռնիա: Երաժշտական ուսումը ստացած է Թուրքիոյ մէջ ապրող իտալացի երաժշտա-էտներու մօտ, ապա՝ մասնա իտալացի Սիլվանոյի մէջ, Իտալիա:

Այրած է եւ ստեղծա ործած Կ. Պոլսոյ մէջ մինչեւ 1896, հեռանալով այդտեղէն միայն կար՝ մը առիթներով, ներկայացնելով իր ործերը: (Ե իպտոս 1885-ին, Ֆրանսա 1891-1892 ... եւ այլն):

1896-ին Սուլթան Ապտուլ Համիտի (1876-1909) հայերու հանդէպ իրա ործած հալածանքներուն պատճառաւ ձ րած է Կ. Պոլիսը եւ հաստատուած Չմիւռնիա, ուր եւ մահացած է աղքատութեան մէջ:

Չուհաճեանի երաժշտական տարերքը եր արուեստն է, մանաւանդ թատերական եր արուեստը:

Ան հայկական օփերային արուեստի հիմնադիրն է:

Հեղինակած է օփերաներ, ինչպէս «Արշակ Բ.», «Ձեմիրէ», օփերերներ՝ «Արիֆի խարդախութիւնները», «Քեօտ Քեիխ» եւ «Լեւելայիճի հօր-հօր Աղա», որոնց ներկայացումները իր կեանքի ընթացքին ունեցած են մեծ յաջողութիւն եւ ժողովրդականութիւն վայելած:

Չուհաճեան հեղինակ է նաեւ շարք մը եր երու, քնարեր ուրիւններու եւ դաշնամուրի, սենեկային նուա ախումբի եւ նուա ախումբի համար յուած ստեղծա ործութիւններու:

Եզակի երեւոյք են Չուհաճեանի յօրինումները վեց լեզուներով յուած բանաստեղծութիւններու վրայ:

Չուհաճեան հայկական երաժշտութեան պատմութեան բացառիկ դէմքերէն մէկն է: Նախաձեռնած է եւ ինքնատիպ կերտուածքով միաձուլած՝ արեւելեան եւ արեւմտեան երաժշտութեան կշռոյթները:

** Գոհարիկ Ղազարոսեան ծնած է Կ. Պոլիս 1907 թուականին եւ մահացած Փարիզ՝ 1967-ին: Եղած է բազմահմուտ դաշնակահարուի եւ երաժշտահան: Բնակած է Կ. Պոլիս եւ ստեղծա ործական աշխատանքի հետ միատեղ զբաղած է մանկավարժական ու երաժշտական հասարակական ործունեութեամբ:

1934 թուականէն սկսեալ համեր-ներով հանդէս եկած է Եւրոպայի բազմաթիւ բաղաքներուն եւ ԱՄՆահան-ներու մէջ:

Կատարած է ինչպէս հնա ոյն վարպետներու, այնպէս նաեւ նորային երաժշտահաններու ործերը, ներառեալ Կոմիտասի եւ իր ստեղծա-ործութիւնները:

Գոհարիկ Ղազարոսեանի ստեղծա ործական ժառան ութեան լիսաւոր մասը դաշնակի համար յուած ործերն են, որոնք կը բովանդակեն բազմաթիւ նուա աշարեր, մանրանուա ներ, սոնաթ մը եւ երկու քննորթօ:

Հեղինակած է նաեւ ստեղծա ործութիւններ ջութակի եւ դաշնակի, թաւջութակի եւ դաշնակի, սրին ի եւ դաշնակի, եռանուա ի (դաշնակ, ջութակ եւ թաւջութակ, դաշնակ, սրին յ եւ ջութ), լարային քառանուա ի, հն աճնուա ի (օպուա եւ լարային քառանուա յ, եւ սրին յ ու լարային քառանուա յ) եւ եր եհոնի համար:

Գոհարիկ Ղազարոսեան հեղինակած է նաեւ բազմաթիւ մեներ-ներ եւ խմբեր-ներ՝ տարբեր նուա արաններու նուա ակցութեամբ ու միակ թատերապար մը՝ Մօր Մը Պատմութիւնը:

Գոհարիկ Ղազարոսեանի ործերը կարելի է բաժնել երկու մասի յօրինումներ՝ հայկական աւանդական մեղեդիներու հիման վրայ եւ ինքնուրոյն ործեր:



ՄԵՐ ԳԱՂՈՒԹԵՆ ՆԵՐՍ

ՈԳԵԿՈՉՈՒՄ ՎԱՐՂԱՆԱՆՑ ԶԵՐՈՍԱՄԱՐՏԻ

Վարդանանց հերոսամարտի ժողովրդային ոգեկոչումը ընթացիկ սովորութեան համաձայն տեղի ունեցաւ 3-րդ Գեղարուեստասիրաց Միութեան Թէքէեան Սրահին մէջ, 3 Փետրուար 2005-ի երեկոյեան:

Օրուան դասախօսուիի Օր. Սիլվա Ղազէլեան 15 դարերու խորքէն եկող Վարդանանց պատգամը համապարփակ եւ ինքնուրոյն մեկնաբանութեամբ մեզի փոխանցեց:

Օր. Ղազէլեան իր խօսքին մէջ շեշտը դրաւ Վարդանանց «հրաշագունդ, անշէջ» հոգիին զօրութեան վրայ, որ արդէն 1500 տարի շարունակաբար իր անշնչելի ազդեցութիւնը ունեցած է իւրաքանչիւր հայու հոգիին վրայ:

«Վարդանանց արդար ապստամբութիւնը համաշխարհային պատմութեան մէջ, թերեւս համարուի առաջին օրինակը խղճի ազատութեան համար մղուած համագգային պոռթկումին» ըսաւ Օր. Ղազէլեան, իսկ Յազկերտին ուղղուած մերժման նամակը բնութագրեց որպէս «հայ հոգիին յաղթական դրօշը, որ դարեր շարունակ մեզ գօտեպնդած է բոլոր ժամանակներու Յազկերտներուն դէմ դնելու կարողականութեամբ»:

«Վարդանանց մեզի կը պատգամեն միասնակալութեամբ պաշտպանել մեր երկիրը, պահպանել

մեր կրօնքը, լեզուն ու մշակոյթը, որոնք մեր ժողովուրդին մնայուն արժէքներն են եւ բացարձակապէս պետք չէ ենթակայ ըլլան շահարկութիւններու», ըսաւ ան:

Ապա ան կոչ ըրաւ «Լսել Վարդանանց քաջերէն եկող պատգամը, եւ փորձել գործադրել զայն մեր ուժերուն եւ կարողութեանց չափով»:

Հանդիսութեան սկիզբը տեղի ունեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը ՀԳՄիութեան Թէքէեան Երիտասարդացի պատանիներուն եւ երիտասարդներուն կողմէ:

ՀԳՄիութեան, ՀԱՀ Կոկանեան Սրահի եւ Հայկական Ընթերցասրահի համար աւանդութիւն դարձած այս ոգեկոչումին նշման հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ հայկական «Հարիսա»ի պատուասիրութիւն:



«ԱՐԵՆ» ՕՐԱԹԵՐԹԸ 90 ՏԱՐԵՎԱՆ

1915-ի Մայիսին ծնունդ առած եւ 90 տարիներ անխափան հայ ժողովուրդին ծառայած «Արեն» օրաթերթի 90-ամեակն էր առիթը, որ 12 Փետրուարին ՀԳՄիութեան «Թէքէեան Սրահ»ին մէջ հաւաքած էր եգիպտահայ հանգամանաւոր անձեր եւ «Արեն»ի բարեկամներու լայն շրջանակ մը:

Հայ Ազգային Հիմնադրամի արեւապետ՝ տիար Կարպիս Եազըճեան ողջունելէ ետք ներկաները, ամփոփ գիծերու մէջ տուաւ պատմականը «Արեն» օրաթերթին, անդրադառնալով նաեւ անոր 8-ամեայ

արաբերէն յաւելուածին, խմբագրութեամբ տոքթ. Սոհամետ Ռէֆաաթ Էլ Իմամի:

«Արեն» օրաթերթին լոյս ընծայման բարոյապէս եւ նիւթապէս սատարողներուն ուղղած իր շնորհակալական խօսքին մէջ, տիար Եազըճեան մասնաւորեց ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղին ընձեռած բացառիկ օժանդակութիւնը «Արեն»ի արաբերէն ամսական յաւելուածին հրատարակման համար:

ԱՐՁԱՆԱԳՈՐԾ ՍԱՐԳԻՍ ԹՕՍՈՒՆԵԱՆԻ ՅՈՒՅԱՅԱՆԴԵՍԸ

Աղեքսանդրիոյ Գիտութիւններու եւ Մշակոյթի Ռուսական կեդրոնը, աղեքսանդրիահայ արուեստագէտ, արձանագործ Սարգիս Թօսունեանի անհատական 11-րդ ցուցահանդէսը հիւրընկալեց, Յունուարի վերջաւորութեան:

Ներկայացուած 29 ստեղծագործութիւններէն 20-ը պրոնզածոյլ էին, երկուքը ալիմիսիում, վեցը թրծակաւ եւ մէկը փոլիէթթ:

Համաձայն «Արեն» Օրաթերթի 14 Մարտի թիւին

մէջ Հրանդ Զէշիշեանի գրիչով լոյս տեսած գրութեան, Թօսունեանի արուեստը պարզ է ու յստակ, գեղեցիկ ու վեհ, խորունկ ու տպաւորիչ, իմաստալից եւ օժտուած լաւատեսութեամբ, որ անմիջապէս դիտողին կը «փոխանցուի»:

Թօսունեան արուեստագետին կը մաղթենք նորանոր յաջողութիւններ նաեւ ցուցահանդէսեր արտասահմանի եւ Հայաստանի մէջ:



ՓՈՒԶԻԿԵԱՆ ԵՌԵՎԱԿԸ ՊԱՅԻՐԵԻ ՄԵՋ

Նախկին եգիպտահայ, այժմ ամերիկահայ ջութակահարուհի Նայիրի Փուչիկեան – Զրետեան այս անգամ Գահիրեի մեջ իր հետ բեմ բարձրացուց իր երկու դուստրերը, Զուրիկը՝ ջութակ եւ Ռուբինան՝ դաշնամուր:

Փուչիկեան եռեակը ելոյթ ունեցաւ Գահիրեի Պլըքտանեան հանդիսասրահին մէջ, Կիրակի, 27 Մարտին, Զայ Գեղարուեստասիրաց Միութեան 85-ամեայ յոբելեանական տարուայ յայտագիրներուն ծիրէն ներս:

Յայտագիրին առաջին բաժինին մէջ եռեակը կատարեց Bohuslav Martinu-ի սոնաթը զոյգ ջութակի եւ դաշնամուրի համար եւ Pablo De Sarasate-ի Havara (Spanish Dance) Opus 33 ստեղծագործութիւնը:

Edoard Halo-ի Symphonie Espagnole-ի առաջին շարժումը հանրութեան ներկայացուցին Զուրիկ Փուչիկեանը (ջութակ) եւ Էլէնա Տամաշվիլիս (դաշնամուր), իսկ Նայիրին եւ Էլէնան մեզ հպարտացուցին հայ երաժշտահան Ալեքսանդր Յարութիւնեանի Poem-Sonata-ի կատարումով:



Դադարէն ետք Felix Mendelssohn-ի Trio No 1 in D minor, op. 49 հեղինակութիւնը կատարուեցաւ Նայիրի Փուչիկեան, Սոհամմետ Ապտ Էլ-Ֆաթահ (թաւջութակ) եւ Էլէնա Տամաշվիլի եռեակին կատարմամբ:

Նման երաժշտական վայելքներու կազմակերպումը երանի յաճախակի դառնայ մեր գաղութէն ներս:

«ԱՐԱՄ» ԸՆՐԺԱՊԱՏԿԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԶԳՄ-Ի «ԹԵՔԵԱՆ ՍՐԱՅ»-ԻՆ ՄԵՋ

Ֆրանսահայ բեմադրիչ Ռոպեր Բէշիշեանի «Արամ» շարժապատկերը Շաբաթ, 23 Ապրիլի երեկոյեան ներկայացուեցաւ ԶԳՄ-ի «Թեքեան Սրահ»-ին մէջ:

Վերջերս արտասահմանի մէջ ստեղծուեցան եւ մեծ ճանաչումի արժանացան երկու ֆիլմեր, որոնք անդրադարձան Զայոց Յեղասպանութեան եւ հայ դատին: Անոնցմէ առաջինը Աթոմ Եղոյեանի «Արատ»ն էր, իսկ երկրորդը՝ Ռոպեր Բէշիշեանի «Արամ» ֆրանսերէն լեզուով շարժապատկերը:

Զարցագրոյցի մը ընթացքին Ռոպեր Բէշիշեան նշած է: «Ես երբեք չեմ կտրուած իմ պատմութենէս:

Ես խորապէս ֆրանսացի կը զգամ, բայց նաեւ՝ նոյնքան հայ: Ես զերծ եմ այն անձերու կարողութենէն, որոնք կը մերժեն իրենց անցեալը»:

Այդ անցեալի պատահարներէն ազդուած ու ներկայի կացութենէն մղուած ան ստեղծած է «Արամ»-ը, որ կը մարմնաւորէ հայ Ֆետայիի պատկերը:

Զամաձայն բեմադրիչին այս շարժապատկերը հնարաւորութիւն կ'ընձեռէ թուրք ժողովրդավարներուն մտորել անցեալին մասին: Որքան շատ մտորեն, այնքան գործը մեզի համար աւելի առաջ կ'ընթանայ, կ'ըսէ ան:

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԱՐՄԵՆ ԿՐՊՈՅԵԱՆԻ ՑՈՒՅԱՅԱՆԴԵԱԸ

Չամալէքի Արուեստից Զամալիրի «Ախնաթոն 2» սրահին մէջ, Ապրիլի 26-ին փրոֆ. Ահմետ Նաուար բացումը կատարեց քանդակագործ Արմեն Կրպոյեանի անհատական ցուցահանդէսին:

2001 թուականին Ֆլորանսի մէջ կայացած Պենսիլի քանդակագործութեան երկրորդ մրցանակին արժանացած եգիպտահայ արուեստագետը 1997-էն

սկսեալ մասնակցած է բազմաթիւ հաւաքական ցուցահանդէսներու եգիպտոսի, Եւրոպական երկիրներու, ԱՄՆահանգներու, Չինաստանի եւ Ճափոնի զանազան քաղաքներուն մէջ:

Արուեստագետը իր այս ցուցահանդէսին ներկայացուցած է գորշ պազալթի եւ կրանիւթի նման նախանիւթերով պատրաստած իր գործերը:

«ՉԱՆԳԵՉՈՒՐ»Ը ԿՐԿԻՆ ԲԵՄԻ ՎՐԱՅ

Երկար դադարէ ետք ԶԳՄ-ի, Կոկանեան Սրահի եւ Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթ Մշակութային Միութեան միացեալ «Չանգեզուր» պարախումբը իր ելոյթները ունեցաւ Նախ Գահիրեի Ամերիկեան Զամալսարանի «Իուրթ Մեմորիլը» սրահին մէջ 29 Ապրիլին եւ ապա՝ Մայիս 1-ին Աղեքսանդրիոյ Էլ-Նասր Աղջկանց Գոլէժի (EGC) սրահին մէջ:

Պարախումբը բաղկացած մանուկներու, պատանիներու եւ երիտասարդներու խումբերէ, թիւով 90 հոգի, ներկայացուց հայկական, արդիական, ավիրիկեան եւ ռուսական պարերու փունջ մը:

Զայաստանի Պարի Պետական Անսամբլի մենա-

պարուհի Էլէն Մարտիրոսեանի կատարած ճիգը պատրաստելու այս ելոյթը (իր առաջին փորձառութիւնը) ակնյայտ էր:

Ակնյայտ էր նաեւ մասնակից միութիւններէն կազմուած պատասխանատու տիկիներուն տարազներու պատրաստման, քուլիսային, կազմակերպչական եւ քովընտի այլ աշխատանքներու մէջ տարած մեծ գործունեութիւնը:

Զաւաքական աշխատանքի համեղ պտուղն էր որ ճաշակեց այն հոծ բազմութիւնը որ լեցուցած էր դահլիճը:

ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ

ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիղի անդամներին տեր եւ տիկին Հայկ եւ Այտա Նա աշեաններ, բախտաւորուեցան անդրանիկ բռնիկով մը:

Երեւանի մէջ Մարտ 4-ին, լոյս աշխարհ եկած Արե ը ուրախացուց ծնողքը՝ տեր եւ տիկ. Աշոտ Նա աշեանները, մեծ ծնողները Գահիրե՛ եւ Երեւան, եւ մեծ մեծ մայրը տիկին Զարուհի Զօրայեանը:

Կը շնորհաւորենք զիրենք եւ իրենց բոլոր հարազատները ու Նորածինին կը մաղթենք արեւջատ տարիներ:

Ուրախութեամբ տեղեկացանք թէ ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիղի անդամներին տեր եւ տիկին Գէորգ եւ Մարո Մազլումեաններ 20 Մարտ 2005-ին, բախտաւորուած են երրորդ զաւակով՝ դստրիկով մը, որ անուանակոչած են Լիտիա:

Կը շնորհաւորենք Նորածինին ծնողքը եւ մեծ ծնողները, տիկիներ Լուսին եւ Ալիս Մազլումեանները, մաղթելով Նորածինին առողջ եւ երկար կեանք:

4 Ապրիլ 2005-ին լոյս աշխարհ եկաւ ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիղի ատենադպիր տիար Հրանդ Վարձպետեանի եւ տիկին Շողերի անդրանիկ դուստրը՝ Ալիքը:

Ձերմօրէն կը շնորհաւորենք Նորածինին ծնողքը, մեծ ծնողները՝ ԶԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիղի ատենապետ տիար Սարգիս Վարձպետեանն ու տիկին Մակին, Գահիրեի ԶԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ անդամներ տեր եւ տիկին Վիգէն Վարձպետեանները, Նոյն Միութեան երկարամեայ անդամներէն Նորածինին մեծ մեծ ծնողները՝ տեր եւ տիկին Անդրո Վարձպետեանը եւ տիկին Շաքէ Առաքելեանը Նաեւ տիկին Օրծան Յակոբեանը եւ Ալիքին բոլոր հարազատները:

Նորածին Ալիքին կը մաղթենք առողջ եւ ուրախ կեանք հայաբոյր երդիքի տակ:

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, 22 Փետրուար 2005-ին իր մահկանացուն կնքեց ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիղի վեներան անդամ՝ Սար իս Ֆ. Փափազեան:

Խորապէս կը վշտակցինք հանգուցեալին այրիին՝ տիկին Բեկիի, զաւակներուն՝ տիար Ներսէսի եւ տեր եւ տիկին Աշոտ Փափազեանի ու բոլոր հարազատներուն:

Խոր կսկիծով կ'արձանա յենք մահը Աղեքսանդրիոյ ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան փոխ-ատենապետ տոքթ. Արթուր Արթինեանի, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 2 Մարտ 2005-ին:

Անժամանակ եւ վշտալի այս կորուստին առթիւ մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին այրիին՝ տիկին Անիի, զաւակներուն՝ Դանիայի եւ Վահէի, մօր՝ տիկին Սիրվարդի եւ բոլոր հարազատներուն:

Թող հանգուցեալին բարի յիշատակը միտքարութիւն պարգեւէ բոլորին:

9 Մարտ 2005-ին մահացաւ ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիղի եւ ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ անդամներին Ղազարոս Չորլեան:

Հանգուցեալին հարազատներուն կը յայտնենք մեր զգացուած ցաւակցութիւնները:

Ուրբաթ, 1 Ապրիլ 2005-ին Գանատայի մէջ իր մահկանացուն կնքեց ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիղի նախկին փոխ ատենապետ Կարայիս Էսերեան:

Մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք հանգուցեալին քրոջ՝ Գոհարիկ Կանիսեանին ու բոլոր հարազատներուն:

Գահիրեի ՀԲԸՄ-ի եւ ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ լայն շրջանակին խոր ցաւ պատճառեց մահը Գահիրեի Ե. Գ. Մ. Հո աբարձուքեան ատենապետ Գէորգ Էքսերեանի, որ տեղի ունեցաւ Հին շաբթի, 28 Ապրիլ 2005-ին, Աթէնքի մէջ:

Ուրբացեալը ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիղի երկարամեայ անդամ էր, ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐ Մարզարանի նախկին փայլուն պատրաստիւստ եւ վարչական անդամ, նաեւ Գահիրեի Ե. Գ. Մ. Հո աբարձուքեան անդամակցած՝ աւելի քան 35 տարիներ:

Մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք հանգուցեալին տիկնոջ՝ տիկին Զեթիի եւ ողբացեալին բոլոր հարազատներուն:







ULTIMATE CRIME, ULTIMATE CHALLENGE

An International Conference on the 90th Anniversary of the Armenian Genocide
CLOSING ADDRESS

By Vartan Oskanian
Minister of Foreign Affairs
Republic of Armenia

On behalf of the National Commission, I wish to publicly express our sincere appreciation to everyone who has participated in this conference. I want to thank the Zoryan Institute for their professional and organizational counsel. I especially wish to thank the scholars, writers, professors - all with serious work and time commitments - who traveled to Armenia to be here with us at this time, this year. The symbolism is not lost on anyone. We are here 90 years later calling for recognition and prevention so that in 2015 we can gather together only for remembrance.

Over these two days, each of our speakers has found various eloquent ways of saying the following:

Genocide is the ultimate crime against humanity. It is the extreme abuse of power. It is a betrayal of the responsibility of custody by the very people entrusted with insuring the security of their own population. The human rights challenge facing all of us is to be able to recognize that a government has the capacity for such immorality and inhumanity, and that particular governments have indeed committed genocide.

There is no national history in a vacuum. No nation can escape its history entirely, it can only transcend it. But to transcend, one must confront history, both internally and in relation to others. And those others, too, must also jointly confront theirs.

In other words, Armenia and Turkey must confront their histories. Individually and together. Armenia believes Turkey must put excuses aside and enter into normal relations with a neighbor that is neither going to go away nor forget its history.

We are not the only neighbors in the world who have had, and who continue to have, a troubled relationship. Troubled memories, a tortured past, recriminations, unsettled accounts and the enduring wounds of victimhood, plague the national consciousness of peoples on many borders. In our case, some distance between our two countries might have allowed us to put distance between our past and our future. But we have no such luxury. There is no space, no cushion, between us. We live right here, close by, reminded at all times of the great loss that we incurred. Yet it is because we live right next door that we must be willing and prepared to transcend the past.

But we can only do so if the demons of the past have been rejected by our neighbor, too. You notice, I didn't say 'by the perpetrator.' Armenians are able to distinguish between the perpetrators and today's govern-



ment of Turkey. Two-thirds of the Armenian population of the Ottoman Empire were massacred or deported between 1915 and 1918. Today's Republic of Turkey must be able to condemn these acts for what they are. The evidence is overwhelming, clear, unavoidable.

Armenians were one of the largest minorities of the Ottoman Empire. Where did they go? Is it possible that all our grandmothers and grandfathers colluded and created stories? Where are the

descendants of the Armenians who built the hundreds of churches and monasteries whose ruins still stand in Turkey? Is US Ambassador Henry Morgenthau's account of the atrocities that he witnessed a lie? Why was a military tribunal convened at the end of World War I, and why did it find Ottoman Turkish leaders guilty of ordering the mass murder of Armenians? How does one explain the thousands and thousands of pages in the official records of a dozen countries documenting the plans to exterminate the Armenian population of the Ottoman Empire? If it wasn't genocide and they were simply 'war time deportations' of so-called rebellious Armenian populations near the eastern border with the Russian Empire, as Turkish apologists sometimes claim, why were the homes of Armenians in the western cities looted and burned? Why were the Armenians of the seacoast towns of Smyrna and Constantinople deported? Boatloads of people were dumped in the sea - is that what deportation is all about? Could rounding up scores of intellectuals on a single night and killing them be anything but premeditation?

When a government plans to do away with its own population to solve a political problem - that's genocide. At the turn of the 20th century, the Ottoman Empire was shrinking, it was losing its hold over its subjects along the periphery of the empire. For fear that in Anatolia, too, the Armenian minority would agitate for greater rights and invite foreign powers to exert pressure, the Ottoman leadership used the cover of World War I to attempt to wipe out the Armenians, beginning with the leadership, following with the men, and finally deporting women, children and the elderly.

This fits neatly into the definition of genocide: The perpetrator did cause a multitude of deaths; these persons did belong to a particular national, ethnical, racial or religious group. The perpetrator intended to and in fact did destroy, in whole or in part, that national, ethnical, racial or religious group, and this destruction followed a consistent pattern. In fact, US Ambassador



Henry Morgenthau called what he witnessed, the Murder of a Nation. Others called it 'race murder'. They did so because there was no term Genocide yet. When the word was finally coined in 1944 by Raphael Lemkin, it was done with clear reference to genocidal acts prior to that date, the Armenian Genocide included. There is no doubt that if the word genocide had existed in 1915, every one of the hundreds of articles in the NY times or elsewhere, would have used the term. Look how frequently the word 'genocide' is used today to describe events and cases where the scale and depth of the atrocities are incomparable.

Armenians continue to live with the memory of suffering unrelieved by strong condemnation and unequivocal recognition.

On the contrary, Turkey spends untold amounts to deny, dismiss, distort history. Not just money, either. Today, their continued insistence on rejecting and rewriting history costs them credibility and time. One does not knock on Europe's door by blindfolding historians and gagging writers. Especially when the subject at hand is one as grave and consequential as genocide. The Turkish parliament's recent call to revisit, review, revise the documents gathered by Arnold Toynbee and James Bryce for the British Blue Book series brought the revisionist efforts to a new low. Turkey has moved on from trying to rewrite its own history to thinking it can convince others to rewrite theirs. This only frustrates the process, exacerbates the emotions and refuels the fury. Worse, such cynical moves embolden those who do not believe in reconciliation, understanding its great risks and costs.

Elie Wiesel has said that denial of genocide is the final stage of genocide because it "strives to shape history in order to demonize the victims and rehabilitate the perpetrators." That is what Turkey - not the people but the government - is trying to do. Today's Turks do not bear the guilt of the perpetrators, unless they choose to defend and identify with them. Armenians and Turks, together with the rest of the modern world, can reject the actions and denounce the crimes of the Ottoman Empire.

Turkey must also de-link history from politics. The excuses about what might follow genocide recognition are just that - excuses. Why are they surprised that Ararat is on our state seal? Armenians have lived on these lands for thousands of years, and Armenia's borders have changed a great deal over the millennia. That's a historical fact. The Armenian kingdom stretched from sea to sea. That's a historical fact. The last change came at the beginning of the 20th century. That, too, is a historical fact. By the provisions of the Treaty of Sevres, the territory of Armenia was ten times what it is today. That is a historical fact as is the fact that Turkey defied the treaty which had been signed by its own government, and by force, created a new de facto situation, which led to the signing of another agreement, without the same signatories. This new agreement delineated, more or less, today's borders. That

too is historical fact.

But it is a political reality that both Turkey and Armenia exist today in the international community with their current borders. It is a political reality that we are neighbors and we will live alongside each other. It is a political reality that Armenia is not a security threat to Turkey. And finally, it is a reality that it is today's Armenia that calls for the establishment of diplomatic relations with today's Turkey.

For these reasons, anything beyond genocide recognition has not been and is not on Armenia's foreign policy agenda.

Yesterday I was being interviewed by a Turkish television crew. I was surprised at the amount of misinformation that they had. They were surprised that the Armenian-Turkish border is open from the Armenian side, that it is Turkey that keeps it closed. They were surprised that Armenia has no pre-conditions for establishing diplomatic relations with Turkey. They were highly surprised that even the recognition of Genocide is not a precondition. They were also surprised that the Kars Treaty has not been denounced or revoked by the Government of Armenia. Now I'm surprised that official Turkish propaganda has taken over and blurred the views of many.

There's another misunderstanding. By default, people assume that we're opposed to Turkey's membership in the EU. They're wrong on this one too. Of course we would like to see Turkey become an EU member. Of course we'd like to see that Turkey meets all European standards. We'd like to see that Turkey resemble Belgium, Italy and others. We'd like to see Turkey become an EU member so that our borders will be open, so that our compatriots and Turkish scholars will speak more freely about Genocide. We would like to see Turkey as a member so that our churches and properties will be protected and restored.

Armenia believes that, at exactly this time, when Turkey is having to reconsider human and civil rights, freedom of expression and religion, it must be encouraged, and persuaded, to acknowledge its past. Such encouragement and persuasion must come from both outside - and more importantly, as Hrant Dink stressed yesterday - from within Turkish society.

Turkish writers and politicians have begun that difficult process of introspection and study. Some are doing so publicly and with great transparency. We can only assume that Europe will expect that a Turkey which is serious about EU membership, which is indeed able to juggle the complex relationships that EU membership entails, will have to come to terms with its past.

In this context, it is essential that the international community doesn't bend the rules, doesn't turn a blind eye, doesn't lower its standards, but instead consistently extends its hand, its example, its own history of transcending, in order for Armenians and Turks, Europeans all, to move on to making new history.





